

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆՏԷՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հ Ա Յ Ց Ե Ղ Ը

Բրոֆ. Անդրեաս Արծրունիի մահը տխուր առիթ մը հուսոյ հաստատելու թէ հետզհետէ պահպելու վրայ են այն մեծ դէմքերը որոնք այս պարուն մէջ հայ ցեղին բարձրագոյն ընդունակութեանց ապացոյցը սուին՝ հայրենի երկրէն դուրս իրենց գրաւած զիրքերուն մեծութեամբը, փառքով ու հռչակով ծանրաբեռն մէկ քանի մեծ դէմքեր լուսաւոր կէտերու պէս կը մնան զեռ, որոնց վրայ կը հանդէս մեր աչքերը հպարտութեամբ: Բայց ո՛չ մեկնող ներուն, եւ ո՛չ մնացողներուն ետին, կը տեսնենք այն Հայերը որոնք արդէն պատրաստուած ըլլան անոնց պարագայ թողուցած տեղը գրաւելու եւ հայ անունին տալու այն փայլը ու հմայքը զոր ունեցած է աշխարհի թատերաբեմին վրայ, շնորհիւ անոնց:

Ինչէ՞ն է առիկա: Այն ցայտքը, որ մեր զանգուածին խորերէն բղիւնցաւ այնքան ուժով այս պարուն մէջ, տկարանալու վրայ է: Յեղին կտրովը, որ դարերէ ի վեր կը մնայ պիտի ու կազդոյր, սպառելու մօտ է:

Չէ անշուշտ: Անուրանալի է որ արտաքին պատճառներ հետզհետէ իրենց արգելիչ ու խափանարար մեծ ուժը կը բերեն մեր ցեղին ձգտումներուն զարգացմանը ու վերելքին դէմ: Կարողութիւնները, ընդունակութիւնները ասպարէզի կը կարօտին յաճախ՝ իրենց լրութեանը մէջ ի յայտ գալու համար: Հանգամանքները, պարագաներն են որ օժտուած մարդիկը կը նպաստաւորեն, անոնց կը դուրսցնեն ի յայտ բերել իրենց տաղանդը: Արդ, Արեւելքի մէջ, ուր Հայը բարձրագոյն գործունէութեան մը առիթները ու միջոցները կը գտնէր ցարդ, հետզհետէ իր դէմը կանգնած կը գտնէ պատուարներ որոնց կարելի չէ յաղթել ո՛չ խելքով եւ ո՛չ տոկունութեամբ: Ռուսիա հայ վարչազէտներուն ու զօրականներուն առջին սիսդէմազիք կերպով կը փակէ ասպարէզը: Թիւրքիոյ մէջ Հայը ահա քսան տարիէն աւելի է որ, կտակածանքի ու հալածանքի ենթակայ, թիչ թիչ ի բաց կը թողուի այն ասպարէզներէն ուր պիտի կրնար երեւան բերել իր բարձրագոյն կարողութիւնները. թողէք որ, այն անկերպարան ու քայքայուող շէնքին մէջ որ Թիւրքիան է այսօր, կոխելու գետինը կը պահսի ամէն կտրովի առջեւ. այդ փաստեան հոգին վրայ, ու եւ է փրթթում անկարելի է հիմա: Եզրիպատը, անպլիական թե-

ւարկութենէն ի վեր, նայնպէս փակուած է Հայերուն առջեւ. Նուպար փաշա մը ա՛լ չի կրնար բարձրանալ հոն, ազատ ասպարէզ գտնել իր դիմացը: Պարսկաստան անշուշտ զեռ Արեւելքի այն երկիրն է ուր Հայերը ամէնէն նուազ կաշկանդուած են իրենց գործունէութեանը մէջ. բայց հոն ալ երկիրն քայքայուած արագօրէն կը յառաջդիմէ, եւ Ռուսիոյ բարոյական զերիշխանութեան տակ որ տակաւ առ տակաւ աւելի ամբօրէն կը հաստատուի այդ երկիրն վրայ, բնաւ յուսալի չէ որ Հայերուն միջոց տրուի երկիրն բարձրագոյն վարչութեան մէջ յառաջանալու:

Այս ամէնը ընդունելով հանդերձ, տակաւին չի բացատրուիր նահանջի երեւոյթը որ կը նշմարուի հայ ցեղին խոյանքին մէջ: Մեր ցեղին յանդգնութիւնը, ձեռներէցութիւնը քաղաքական ու ընկերական հանգամանքներէ կախում չունի միշտ: Եթէ վարչական ու զինուորական ասպարէզները մեր առջեւ փակուելու վրայ են, մեզի կը մնայ սակայն գործունէութեան գաշտ մը աշխարհի չորս կողմը: Վաճառականութիւնը, եթէ հայրենի երկիրն մէջ քաղաքական ու անտեսական հանգամանքներուն հետ ուզղակի կապ ունի, ազատօրէն կրնայ ծաղիլ սակայն հոն ուր այդ հանգամանքներուն ազդեցութիւնը չի հասնիր: Հայոց պատմութեան ամէնէն խառնակ շրջաններուն իսկ, հայ վաճառականը Գանդեսէն մինչեւ Վասիօր, Եփրատէն մինչեւ Միջերկրական, իր գործունէութիւնը աստիճան է բարդաւած ու բազմալատասակ: Թողլով հին պատմութեան շրջանը ուր Հայերը Ասիոյ ներքին փինիկեցիները եզան կերպով մը, ցամաքի փինիկեցիները, թողլով Բիզանդական կայսրութեան շրջանը ուր հայ վաճառականները Բիզանդիոնը կը մատակարարէին արեւելեան պերճութեան ամէն առարկաներով ու իրենց հակերը կը դիզէին Վասիօրի եզերքը, մէկ քանի դար առաջ Արեւելք ճամբորդած բոլոր ուղեւորներուն տեղեկագրութիւնները ծայրէ ի ծայր լեցուն են հայ վաճառականներուն ընդարձակ գործառնութեանց եւ համասփիւռ գործունէութեան յիշատակութեամբը: Թաւլէրնիէն միայն յիշելով, իր «Վեց ուղեւորութիւն ի Թիւրքիա, Պարսկաստան եւ Հնդկաստան» գրքին երկու հատորներուն մէջ՝ հայ անունը զրեթէ ամէն էջի վրայ կը գտնես: Տասնութներորդ դարուն, կը կարգանք Թաւլէրնիէի մէջ, Չուղայի Հայերը կ'երթային ոչ միայն Եւրոպա, այլ մինչեւ Ասիոյ խորքը, Հնդկաստան, Թոնքին, Փիլիպպին կղզիները, եւ աւելոյ՛ Արեւելք, բայց Չինաստանն ու Ճաբոնէ:

Հողանայէն, Անդլիայէն ու վենետիկէն իրենց կա-
րուանները կ'երկարաձգուէին Պարսկաստան ու Հնդկաս-
տան: «Շահ-Ապպաս, կ'ընէ տնջն հեղինակը, իր Սպանիա
եւ վենետիկ զրկած երկու Պարսիկներէն եւ ուրիշ մէկ
քանի նշաններէ գտանելով որ Պարսիկները վաճառակա-
նութեան ձիրք չունին եւ ի բնէ կը սիրեն պերճանքը ու
ծախքը, բան մը որ չի յարմարիր վաճառականի մը՝ որ
պէտք է խնայող ու տնտեսադէտ ըլլայ, աչքը դարձուց
Հայերուն զորոնք իր առաջադրած նպատակին աւելի յար-
մար գտանց: Տես ու որ հուժկու ու շարքաշ մարդիկ էին՝
երկար ճամբորդութիւններու ձեռնարկելու համար. թէ
շատ ծուծիալ ու սակաւապետ էին, ու շատ տնտեսադէտ,
եթէ, Քրիստոսնայ ըլլալով, կրնային աւելի զիրութեամբ
առեւաւոր ընել ամբողջ Քրիստոսնայ աշխարհին հետ:
Հայերը բիշ ծածանակուան մէջ այնքան փորձառութիւն
վատակեցան որ այսօր չի կայ առուտուր մը որուն ձեռք
չզարնեն:» Թաւէրնիէ իր մէկ ճամբորդութիւնը ըրած է,
Պարսկաստանէն Հնդկաստան, Զուզայի Հայերուն Գա-
լէտեր հոճա Պետրոսի սրբույն հետ: «Մէկտեղ Սուրբ
անցանք, ու անկից կուրսնտա, ուր ինք բաժնուեցաւ եր-
թալու համար Բէկու, ուր իր գործերը կը կանչէին
զինքը:»

Ո՛ր է հիմա այդ մարդերուն սերունդը, որոնք, կամբով
ու խելքով, Ասիոյ մէկ հեռաւոր անկիւնէն կը մեկնէին
ու կ'երթային աշխարհի շրտ կողմը իրենց բաժնին տի-
րանալ՝ հարստութիւններու բաշխումին մէջ: Ո՛ր են յա-
ջորդները մեր ցեղին այդ ռահվիրաներուն, որոնց համար
ո՛չ յաճութիւնները, ո՛չ դժուարութիւնները ամենադոյզն
պատուար մը կը կանգնէին իրենց ծաւալական ոյժին
առջեւ:

Հայրենի երկրէն դուրս, հայ վաճառականութեան
զխաւոր կեցոյնն է հիմակ Մանչէսթըրը ուր կէս դարէն
աւելի է հայ գաղթականութիւն մը հաստատուած է: Արդ,
բոլոր այդ գաղութը առեւտրական միջնորդի պարզ գեր
մըն է որ կը կատարէ լոկ թիւրքիոյ եւ Անդլիոյ միջեւ:
Եթէ թիւրքիոյն խնդրանքները դան, Մանչէսթըրի միջ-
նորդները կը գործեն: Ու այսչափ միայն: Յիսուն տար-
ուան մէջ, հայ մը առաջ եկած չէ որ այս համեստ շրջա-
նակը կտարաւ ու անկից գուրս փնտռէ դանէ նոր շահաս-
տաններ՝ աշխարհի փոխանակութեանց անսահման գոր-
ծունէութեան մէջ:

Քսան տարի է որ հայ գաղթականութեան հասանքը
կը զիմէ Ամերիկա: Միտցիոյ-Նախնադները կարողի, յան-
զըղնութեան, ձեռնիւրկութեան գերազանց երկիրն է, ուր
հրաշալի արդիւնքներ պտակած են մարդկային կամքը ու
խելքը, ուր աշխարհի ամէն կողմէն զիմած կարողներ՝
անաստական մարտին մէջ աննման յաղթանակներ ձեռք
բերած են: Ամերիկայի հայ գաղթականութիւնը սակայն
ստուար մեծամասնութեամբ բանւորութեան, ու ան ալ
լոկ ֆիզիքական ուժ ու մեքինական սպասարկութիւն
պահանջող բանւորութեան աստիճանէն վեր բարձրացած
չէ, ու պզտիկ խոնութեաններու ու պզտիկ վաճառական-

ներու գառակարգ մը այնչափ միայն յառաջացած է որ-
չափ պիտի կրնար ուրիշ ու եւ է տեղ:

Ուշադրաւ երեւոյթ մը չէ՞ր վերջերս Պաքուի հայ
նաւթաւորներէն ոմանց՝ իրենց գործը Անդլիացիներու
վաճառելը: Նահանջ մըն էր ասիկա, որ բարեբաղդաբար
կանգ առաւ: Տնտեսական գերազանցութիւնը, որ Հայերը
կրցած են ձեռք բերել կողի ստի մէջ, ցեղին հաւաքական
ոյժը կ'աւելցնէ: Ասկից հրաժարելը, եկտր տարբերուն
առջեւ տեղի տալը, պարզապէս դատարկութիւն մըն է:
Պաքուի բնական անբաւ հարստութիւններուն տիրացումը
ամբողջովին Հայերուն բաժինը կրնար ըլլալ արդէն, եթէ
սկիզբէն աւելի խելացութիւն ու հեռատեսութիւն ցոյց
առած ըլլային:

Կը հասնինք ուրեմն սա եզրակացութեան. Արեւելքի
մէջ, մեր հայրերը ու նախահայրերը կարող եղան մրցել
Հողանայիներուն, Բարդուէկիներուն, վենետիկցիներուն,
Անդլիացիներուն հետ: Այսօր անոնց սերունդը անկարող
է զիմանալու եւրոպական մրցումին, ու կը շատանայ առ-
օրեայ շահերով ու ընդհանուր գործառնութեանց մանր
մանր թափթիւքներովը ասպին անդին:

Յեղին ո՛յժն է որ պահած է: Կորովի մթերքը, որ
հայրենի հողին վրայ խտացած է, ա՛լ իր կենսականու-
թեան հիւթը չէ՞ զրկեր հայ երակներուն մէջ: Զօւսանակը,
դէպի յաղթանակները ու տիրացումները լարուած պրկուած
զսպանակը ժանդոտած է:

Ապահովապէս ո՛չ: Մենք մեր ցեղին վրայ շա՛տ հա-
ւաք ունինք, այդպիսի վճիռ մը յանդգնելու համար:
Այն տարօրինակ յեղաշրջումը որ ազդը կրեց այս մէկ
քանի տարիներուն մէջ, այն աւելի խորին ու աւելի զի-
տակից հաւաքը որ վերածնեցաւ ցեղին էութեանը մէջ,
անշուշտ ժամանակ չունեցան զեռ տալու իրենց բարերար
արդիւնքները: Փոխանցութեան շրջանի մը մէջ ենք: Մէկ
քանի տարիներու ընթացքի մէջ չէ որ կարելի է դատել
աներկբայ ցեղի մը բնաշրջումը ու ապահով եզրակացու-
թիւններ հանել ասկից:

Բայց համոզուինք խորապէս թէ ամէն ժամանակ
աւելի կամքի ու խելքի պէտք ունինք, աշխարհի մէջ տեղ
մը գրաւելու համար, նոյն խի աւելի բարձր տեղ մը քան
ինչ որ ունեցած ենք մինչեւ հիմա: Գեր մը ունինք
զոր պատմութիւնը ու հանգամանքները մերը ըրած են,
— Ասիայի խորէն ճառագայթել ամենուրեք, մարդկային
գործունէութեան ամէն գաշտերուն մէջ: Անո՛վ է որ գո-
յութեան իրաւունք ունինք: Ամէն հայ առօր զիտակցու-
թիւնը ունենալու է, ու ամէն հայ աշխատելու է ցեղին
մէջ թաքուն ինքնապահպանման ու զարգացման ուժով
բնագոյները կերպարելու, հրահանգել եւ ուղղել դէպի մեծ
ու լայն ճամբաները որոնք յաղթանակները կը տանին:

Հաւատանք թէ մեր դէպի առաջ վազըին մէջ զա-
գարներ կրնան պատահիլ, բայց բնաւ երբեք նահանջներ,
որոնք ինքնասպանութիւններ պիտի ըլլային: Գիտնանք
հաւասարիլ բնութեան եւ ընկերութեան մեր վրայ զրած
ժանր պարտականութեանց բորձրութեանը: Ատով միայն
կրնանք տեսել, ատով միայն կրնանք ապրիլ:

ՄԱՐՏԻԿ ԱՂԱ

(ՊԵՊ)

Ա. Մ Ա Ս

Գ

Իսկիւտար, Պաղար-Պաշի կողմերը, ընդարձակ ու ծառազարդ պարտէզով մը շրջապատուած, ահազին զեղեցիաշէն տուն մը զղեկաձեւ ու բազմաշարի կը բարձրանայ՝ Իսկիւտարի այդ բարձունքը յատկանշող տախտակազոյն կամ ներկաթափ ցած, խարխուլ, ծոած, պառուցած, բովբովի կծկտած տուներու նկարչազեղ ու միամիտ հաւաքուածի մը դրացնութեանը մէջ:

Հակապատկերը ցայտոյ է այդ խեղճուկ բնակարաններուն ու գիւրնք իր բարձրութեամբը, ճոխ ու աղնուապետական ճարտարապետութեամբը տիրապետող այդ ապարանքին, կարծես զիտմամբ կատուցուած հոգ, ժողովրդական ազգատիկ թաղին մէջ: Դէպք, մը, անվերջ խօսակցութիւններու առիթ մը, այդ խաղաղիկ թաղին բնակիչներուն համար, տարիներ առաջ, լուրը թէ հայ մեծ վաճառական մը, Մարտիկ Սրմաքէշեան, գնած էր զիմացի «վերանէ»ն ու պարտէզը՝ տուն մը շինել տալու ու Գառըզեղէն հոն փոխադրուելու համար: Ու իրաւ աշխատութիւնները սկսան փութով, ու առտու մը, տունը, խրոխտ ու պերճ, կանգնուած տեսնուեցաւ, ու օր մը տերերն ալ եկան, մայրը, աղջիկը ու մարդը: Եթէ այդ պերճութեան դրացնութիւնը թաղեցիներուն սնափառութիւնը շոյեց, ունեցուց՝ ազնուականութեան, պարճանքի տիտղոսի մը պէս որ իրենց թաղին շինականութիւնը սրբազրած ըլլար, եթէ ասոնք շնորհակալ էին նորեկներուն՝ իրենց թաղին վարկը բարձրացուցած ըլլալուն, շատ ներողամիտ ու բարի չէին սակայն նոր բնակիչներուն համար որոնց բաշուած կեանքը, հպարտ գիւրքը թաղին մէջ՝ իրենց անձնասիրութիւնը կը վերաւերէր, միեւնոյն ասան որ իրենց բամբասող եռանդը կը զրկէր շատ մը տեղեկութիւններէ, մանրամասնութիւններէ, խօսուողութիւններէ, ու կը ստիպէր զայն սնանել, զոհանալ սպասախումբին շարժումներուն, այցելութիւններուն կամ ելքերուն յարաբերաբար ազգաս նիւթեղէնովը:

— Ըհ, կ'ըսէր թաղուկ հանրմը, յիտուն տարեկան կին մը, զիմացի պատուհանը նստած դրացուհիին, երկուքն ալ կար կարելու զբաղած, — Հի՛շ բերիս չընեց աս մարդիկը: Մարդը շատ ժանիքոտ բան կ'երեւայ կոր. միշտ ծառաները շախելու շախչելու վրայ է:

— Բա հա՛, ան ինչ զէմք է քի...

— Աղջիկը ըսե՛ս նէ՛ քիթէն իյնողը հազար կտոր կ'ըլլայ. առչափ ասան է հոս է, զեռ անցած ասինք բարեւ մը տուած չունի:

— Գիտես քի մէջերուն էն աղէկը մարդուն մայրն է... չիյտեմ ամա...

— Վնչ, Գառըզեղցի չեն մի... ամէնն ալ տեղերնին մեան:

Այդ տանը մէջ կը բնակէր ԳՁէն ի վեր Մարտիկ Սրմաքէշեան, վաճառական ճերմակեղէնի, Սուլթան Համամ, Սրմաքէշեան խան, իր ծերունի յօրմուլը եւ քսան տարեկան աղջիկովը: Կինը մեռած էր տասը տարի առաջ. ու ինք, այդ մահուան անհուն ցաւին մէջ, զիւրցադնական որոշում մը երգուած էր, «Չի՛ պիտի կարգուիմ», ու հաւատարիմ մնացած էր այդ որոշումին: Ինչքան առաջարկութիւններ եղած էին իրեն, մին միսէն շրջուցիչ: Ո՛չ զեղեցիութիւն ո՛չ զբաժոժիտ կրցած էին զինքը փորձել, խախտել իր ամուրիական առաքինութիւնը: Մարտիկ ազա առաջարկողին բերանը՝ առաջին բառերէն իսկ՝ կը խցեր իր յաւիտենական խօսքովը, «Ես երգում ըրած եմ չկարգուելու»: Եեշարը, խրոխտ ու խոժոռ, առաքիւթիւն չէր վերցնէր, մէկուն քթին բերնին ուժգնօրէն դոցուած գուռի մը պէս: Ա՛լ հարմնցու աղջիկ մատակարարող ընտանիքներուն մէջ կարգախօսի տեղ անցած էր Մարտիկ աղային մերժողական պատասխանը: Առաջակութիւնները ա՛լ գաղթած էին, բան մը որ շատ զոհ չէր ձգեր Մարտիկ աղան, որ պիտի ուզէր անհատում ամուսնական առաջարկներու առարկայ ըլլալ, զանոնք իր թատերական խօսքովը մանելու հաճոյքը տալու համար ինքզինքին: Վերջերը, նոյն իսկ, զիմուսներուն զազարէն ի վեր, իր առաքինութիւնը զօտեպնդելու համար պէտք կ'ունենար ստէպ իր երգուած յիշելու, եւ այդ անտակ արարքէ մը իր վրայ ցայտելիք ամօթը, անպատուութիւնը երեւակայել՝ չերթալ ինք շտաշարիելու համար:

Մարտիկ ազա վաճառական է, ըսինք: Տարօրինակ վաճառական մը սակայն: Երբեք արհեստ ու մարդ այսքան հակառակ չեղան իրարու: Երսուն տարեկան էր երբ հայրը մեռաւ, զինքը ձգելով ժառանգորդ ահազին հարուստութեան մը, ու յաջորդ ճերմակեղէնի տան մը որ հրապարակին վրայ մեծ համբաւ կը վայելէր: Իր ազգականներուն, բարեկամներուն ու յօրը թախանձանքներուն վրայ, Մարտիկ ազա ետ կեցաւ խանութը դոցելու, ապրանքները ծախելու զիտուորութեան, կարենալու համար հասառուի կեանք մը վարել գատարի ու ազատ, ու լայն զոհացում տալ իր բնածին ձգտումներուն:

Ի տես այդ ձգտումներուն՝ «Աս տղան բա՛ն մըն ալ չի պիտի կրնայ ըլլալ» կը վճռէր յաճախ Մարտիկ աղային հայրը, կեսարացի խորամանկ գործի մարդ մը, որ կ'ըսէր թէ իր կեանքին միակ ու խոշոր սխալը պարտեցի ու մանաւանդ գառըզեղցի աղջիկ մը առած ըլլալն էր իբր կին, հպարտ, արհամարհոտ, պճրասէր, ցուցամուլ, յաւակնոտ ու միամիտ աղջիկ մը, որուն բնագոյնը կեռարացի վաճառականին խառնուածքին հետ կը համաձայնէին որքան որ հակառակները կրնան: Մարտիկ ժառանգած էր այդ բնագոյնը, որոնց կը միացնէր հօրը կոշտ, բարկացոտ խանութածքը: Մահուան անկողնին մէջ, խեղճ հօրը մեծ ցան էր ասիկա: Իր կենդանութեանը, հակառակ իր յամառ ջանքերուն, չէր կրցած իր արհեստին սէ...

բը փոխանցել իր ազուն: Չանի հետը շուկայ կը տաներ ստեպ. բայց տղան, փոխանակ ուշադրութիւն ընելու առուտութիւն, աշկերտներուն կը հրամայէր, վարպետի հովեր կ'անէր, դուրս պտըտելու կ'ելլէր, եւ կամ երկու ձեռքերը գրպանը գրած վեր վար ման կուզար յաճախորդներուն առջեւ, ի մեծ դայթակղութիւն հօրը, որուն ասիկա խանութպանական պատշաճութեան ոգին, առեւտրական ճաշակը կը վերատրէր:

Մարտիկ աղային առաջին գործը եղաւ՝ հօրը մահու ընկն հաք գործերուն ուղղութիւնը ձեռք առնելուն պէս՝ Սուլթան-Համամ մեծ խան մը շինել տալ, իր անունով, Սրմաքէշեան խան: Իրեն համար անտանելի էր առեւտուրը շարունակել Պէոյիք Եէնի խանի այն մութ, ցած, խոնաւ սենեակին մէջ, ուր նախամեծարութեամբ հաստատուած էր գործնական ու խնայասէր ոգին իր հօրը, թշնամի ո եւ է աւելորդ զարդի, պերճանքի: Խանին շինութեանը միջոցին Մարտիկ աղա իր խանութիւնը չէր զբաղեր. գործառնութիւններու ուղղութիւնը գրադրին յանձնած, ինք միշտ կը վազէր խան, քննելու, դատելու, չախելու, կարգադրելու, ցուցնելու համար: Ճարտարապետ, հիւան, որմնագիր, բնչպէր ինչէր չքաշեցին Մարտիկ աղային ձեռքէն, որ յանկարծ քովը կը տնկուէր, բարձր ու ժանիքոտ, Հաւատաքննիչի պէս խոժոռ, ոստիկանի պէս հրամայական ու բիրտ, ու ամէն բանի կը խառնուէր, բանի մը չէր հաներ, կը պոռար, կը յանդիմանէր, կը սպառնար ճամբել ամենափոքր զիտողութեան, ամենադոյզն զիմազարձութեան: Հապա ճարտարապետը. քանի քանի փոփոխութիւններու, սրբադրութիւններու ստիպուած էր ենթարկել նախնական յատակագիծը, որ կատարեալ հաւանութիւնը ունեցած էր սակայն Մարտիկ աղային: Անվերջ վիճաբանութիւններ այդ քմահաճ սեփականատէրին հետ, որ ամէն առտու կը հասնէր նոր ծրագրով մը, գիւտ մը, յաւելում մը, փոփոխութիւն մը իր երեւակայտ ու ստեղծող ուղեղին մէջ:

—Վարպետ, միտքս աղէկ բան մը եկաւ երէկ զիշեր, կը սկսէր:

Ամէն բանէ առաջ կ'ուզէր որ իր խանը շքեղ ըլլար, ճոխ, զարդարուն, միւս խաները նսեմացնէր, շողար, պանծար:

—Ամէն բանէ առաջ լիւքս, վարպետ, կ'ըսէր ճարտարապետին Մարտիկ աղա, որ ֆրանսերէն այնքան զիտէր որքան պէտք է զիտցող երեսնալու համար: Յաճախորդը լիւքս կ'ուզէ, գնելու համար:

Խանին տակը կը տարածուէր իր վաճառատունը, լայն, ընդարձակ, օդաւտ, էն խնամուած մասը խանին:

Եէնքը վերջապէս կառուցուած, լմնցած, աւանդական մատաղ բաշխուած էր, «Սրմաքէշեան խան», «Մարտիկ Սրմաքէշեան, վաճառատուն ձերմակեղէնի» եւ այլ բազմաթիւ փոքրագրութիւններով, նկարատախտակներով, ոսկեգօծ ապակեգրութիւններով շէնքին ճակատը պահուածուած, երկայն ուղեցիկ ազդեր, ուղղամներ հրատարակուած ամէն լեզուէ լրագիրներու մէջ, ու Մարտիկ աղա նոր

վաճառատունը փոխադրել սուա Պէոյիք Եէնի խանի «ձակէն» — իր բառովը — ապրանքները: Բայց վաճառատունը շատ խոշոր եկաւ, տպաւորութիւնը սուա լայն ահաղին զգեստի մը՝ նիհար մարմնի մը վրայ ձգուած: Չայն լեցնելու համար, Մարտիկ աղա առատ քանակութեամբ ապրանք գնեց, չնայելով ո՛չ գինին ո՛չ տեսակին: Իր ապշած արհեստակիցներուն կը յայտարարէր.

—Ես քէյֆիս համար կ'ընեմ կոր այս արհեստը... ատեն անցընելու համար:

Ամիս մը ետքը, շուկային մէջ իրեն ծաղրանուն մը գտած էին արդէն, «Միախի գօնթ... Թիւճճար գօնթ» կ'ըսէին:

Ինք չկրնալով, չուզելով իր արհեստին պահանջումներուն ճկիւղ, զայն տիրականօրէն յարմարցուց, հպատակեցուց իր ընդածին յատկութիւններուն: Վաճառատունը կազմակերպեց ինչպէս հրամանատար մը իր զօրանսցը կամ թաղաւոր մը իր արքունիքը: Նախ, թեթեւ հատուցումով մը ճամբեց հօրը սակաւաթիւ պաշտօնեաները, բոլորն ալ շուկայի մթնոլորտին մէջ մեծցած մարդիկ, ու իր վաճառատունը լեցուց զպրոցական կամ շրջանաւարտ երիտասարդներով, որպէս զի, կ'ըսէր, երբ «հայերէն» խօսի, հասկցուի իր պաշտօնեաներէն: Հինգի տեղ որ իր հայրը ունէր, Մարտիկ աղա տանըվեց հատ առաւ, որոնց ամէն մէկուն զատ զատ զբաղումներ յատկացուց:

—Որչափ շատ մարդ ըլլայ վաճառատունը, այնքան շատ մարդ կուզայ զրօն, կ'ըսէր Մարտիկ աղա բարեկամի մը որ այդ ստուարութիւ պաշտօնէութիւնը կը քննապատէր:

Բայց, իրապէս հրամայելու, չախելու, կշտամբելու, խրատելու շատ մարդ ունենալու համար էր իր ձեռքին տակ:

Մէկ դրագիրը կը բաւէր իր հօրը. երեք հատ հաստատեց Մարտիկ աղա, առաջին դրագիր, երկրորդ գրագիր, երրորդ գրագիր: Հոգ չէ թէ զրելու բան չունէին: Նոյնքան գանձապետներ:

Դոնէն ներս մանկուզ պէս, զիմացը կը պարզուէր Բ ո ի — Ֆ ի ք ս ի ն բիրտ հպարտութիւնը: Ասիկա անուանական չէր, ինչպէս շատ մը վաճառատուններու մէջ: Խոստիւ արդիււած էր սակարկել, բան մը որուն անընդունակ էին արդէն զպրոցին զրոտեղանները միայն տեսած երիտասարդներ: Բ ո ի — Ֆ ի ք ս ի ն. վեթոյի մը պէս այս խօսքը պէտք էր նետել ամէն յաճախորդի որ փորձէր սակարկել, զինը զեղչել: Յաճախ Մարտիկ աղա իրեն վերապահուած ապակեւոր զարդարուն առանձնառենեակէն դուրս կ'ելլէր յանկարծակի, ու հասակը ցցած, շարժումը թատերական ու լայն, այս տարօրինակ երեւումէն ապշած յաճախորդներուն կը ցուցնէր սսկեգօծ գրութիւնը.

—Հոն կարդացէ՛ք, բոի-Ֆիքս, մէկ խօսք, կ'ուզէք նէ...

Ու պաշտօնեային դառնալով,
—Ծօ ա՛ւանակ, չըսե՛ս:
Յաճախորդները մէկիկ մէկիկ կը հեռանային հին

տունէն, հակառակ խայծին այն ձրի սուրճերուն ու օշա-
րակներուն զորոնք Մարտիկ աղա հրամայած էր շոպյո-
րէն հրամցնել ամէն յաճախորդի: Բայց Մարտիկ աղա-
յին հոգը անգամ չէր ասիկա:

Շատ ուշ, «վիքէլա»յի պէս կը հասնէր վաճառատուն,
հապշտապ ոտքի ելլող պաշտօնեաներուն յարգական շար-
քին մէջէն կ'անցնէր բարձրագլուխ ու կոկոզավիզ, հովա-
նոցը հրացանաձեւ ուսն ի վեր ցցած, ու կը մտնէր իր
սենեակը, առանց բարեւելու, մինչ անմիջապէս իրեն կը
հետեւեր իր, անձնական ծառայութեանը միայն յատկաց-
ուած պաշտօնեայ մը:

— Աղուտ'ը սուրճ մը, կը պօռար, թէև պաշտօնեան
ճիշդ իր քովը եղած ըլլար:

— Պարոն'ն առաջին գրադիր, կը կանչէր:

Մերթ, պաշտօնեայ մը շուարած կուգար իմացնել
թէ զեռ եկած չէր: Պաշտօնեաներուն մեծ մասը իր ուշ
գալէն կ'օգտուէին՝ իրենք ալ ուշ գալու համար:

— Ինչ, եկած չէ՞ մի'... Ինչ ըսել է եկած չէ:

Կը բորբոքէր Մարտիկ աղա, ոտքի կ'ելլէր:

— Եկած չէ ինչ ըսել է ճանր'մ, լուրը իրեն տուող
պաշտօնեային կը բարկանար: Ես հոս եկած ատենս պաշ-
տօնէութիւնը պէտք է որ ամբողջ ըլլայ, կը հասկնամք
կոր... եթէ ոչ... կը սպաննար զլուսը զուրս հանելով
սենեակէն:

— Գա'լուն պէս ինձի գրկեցէք անպիտանը:

Հոգ չէ թէ վերջէն կը մոռնար յանդիմանել:

— Երկրորդ գրադիրը թող դայ: Ինչ վաճառում եղաւ
այսօր, ինչ ծախուեցաւ, ո՞վ եկաւ, յաճախորդ եկա՞ւ:

Գրեթէ միշտ այս հարցումներուն պատասխանը ո՛չ,
ոչ ինչ էր: Ինչ որ չէր արդիւր Մարտիկ աղան երկար-
բարակ խրատական մը կարդալու պաշտօնէին, նախ կա-
մաց, հանգարտ, քիչ քիչ յուզուելով սակայն, զրգուելով
իր իսկ ձայնէն, իր իսկ խօսքերէն, յաճախ մինչև յան-
դիմանական շեշտին բարձրանալու աստիճան առանց
պատճառի:

— Հայտէ գնա', կը վերջացնէր Մարտիկ աղա, հան-
դիսաւոր ու ծանր, ու ջանա ասիկց վերջը պարտականու-
թիւնդ լաւ կատարել:

Պաշտօնեան, այս ձեւերուն վարժուած, կը մեկնէր
քմծիծաղով մը:

Առտուրնէ մինչև իրիկուն ասանկ: Հարցումներ, հար-
ցաքննութիւններ, չախ, խրատ, հրամաններ, ճամբելու
սպանալիքներ, երբեք իրադործուած, ուռուցիկ ձեւերովը,
բարձրաձայն շեշտովը մէկուն որ հանդիսատեսներուն հա-
մար կը խօսի, բնաւ չզբաղելով առեւտուրով, երբեք չնեղ-
ուելով յաճախորդներուն հետզհետէ շեշտուող բացակա-
յութենէն, որոնց մեծ մասը արդէն ինք կը ճամբէր:

Իր դիտողութիւնները կ'երթային մինչև իր պաշ-
տօնեաներուն հագուստին—կապուստին:

— Ատ արծաթ գնդափայլը ի՞նչ է քաւթովի վրայ:
Լո՛ւրջ եղէք, լո՛ւրջ:

Յաճախորդներու առջև իր պաշտօնեաները յանդի-
մանելը, խայտառակելը իր էն սիրելի խաղերէն մին էր,
ինչպէս նաեւ յաճախորդ ճամբելը:

— Հոս ձեր գիտցած տեղը չէ... ուրիշ վաճառատուն,
ներու չի նմանիր: Կ'ուզէք առէք, կ'ուզէք մ'առնէ՛ք, մենք
չենք աղաչեր հոս:

Յաճախ կ'առանձնանար իր սենեակին մէջ, որուն ա-
պակեւոր դուռը կը կրէր բերա վանուժը սա խօսքերուն,
«Մուտքն արդիւնալ է», ինչ որ չէր արդիւր զինքը ամէն
օր հոն ընդունելէ բազմաթիւ բարեկամներ որոնց հետ ժա-
մերով կը խօսէր, թէև յեղակարծ ու բուռն ելքերով կ'ընդ-
միջէր խօսակցութիւնը՝ զուրսի գործերուն միջամտելու
համար: Առեւտուրի վրայ չէր անշուշտ որ կը խօսէին:
Քաղաքականութիւնը մենամուտութիւնն էր Մարտիկ աղա-
յին, որ ինքզինքը քաղաքական ասպարէզին սահմանուած
կը հատար, ցաւելով միանգամայն որ Հայերը ազատու-
թիւն չունին:

— Եթէ Հայերը ազատութիւն ունենային, կը հառա-
չէր յաճախ, շեշտով մը, դէմքի արտայայտութեամբ մը որ
յայտնութիւն մըն էր հանրային մեծ ծառայութիւններուն
զօր ինք պիտի կրնար մատուցանել իր ազդին եթէ.....

Սպասելով այդ ցանկալի օրուան, Մարտիկ աղա ա-
մենամեծ հետաքրքրութեամբ ու անյադութեամբ կը լսփէր
բոլոր հայ լրագրիւններուն քաղաքական ու ազգային մասե-
րը, ծայրագոյն ուշադրութեամբ կը հետեւէր դիւանադի-
տութեան ամէն մէկ շարժումներուն, միտքը կը խնդրէր
կարդացուած դէպքերով, միջադէպներով, իրեն վերապա-
հելով զանոնք բացատրել, զանոնք իրարու միացնող ներ-
քին կապը գտնել, ենթադրութիւններով, մեկնաբանու-
թիւններով, ու նոյն իսկ քննադատել Եւրոպայի պետա-
կան մարդերուն արարքները: Ամենաչնչին քաղաքական
դէպքէ մը խելքէ մտքէ հեռու հետեւութիւններ կը հանէր,
սպիշեցնող եզրակացութիւններ կը քաղէր, իր ընդհանուր
տեսութիւններուն կը բերէր կը կապէր, էն պարզ անցքին
տակ դիւանադիտական խորունկ մեքենայութիւն մը կը
միտէր տեսնել, պետական մարդերու էն չնչին խօսքերուն
տակ սպանալիքներ, սպազայի ազդարարութիւններ, ու
քաղաքական անձնաւորութիւններու մահերուն մէջ՝ թու-
նաւորումներ, հրամայուած սպանութիւններ:

Քաղաքականութիւնը, դիւանադիտութիւնը իրեն հա-
մար գաղտնիք, կնճիռ, ալք չունէին բնաւ: Գուշակութիւն-
ներ իսկ կ'ընէր, վարդապետական անտարակուսելի շեշ-
տով մը:

— Հապա', ասանկ է. Ռուսը տեսնաք ինչե՛ր պիտի
ընէ...

Խօսելու, հետեւաբար մտիկ ըլլուելու բուն մտատան-
ջութիւններով զեռուն, Մարտիկ աղա ինքզինքը շրջապա-
տած էր փաղաքուշ բարեկամներու շքախումբով մը, որոնք
իր խօսքերը, երեւակայութիւնները էն շողոքորթ հաւա-
նութեամբ կ'ընդունէին, կը ստորագրէին — եթէ ոչ միա-
մտօրէն իր սեղանին ու մառանին լայն ասպնջականու-
թեան խաթիւրը համար:

— Իրա՞ւ բո՞ր, Մարտիկ էֆէնտի, ի՞նչ ալ լաւ գու-
ակեր ես... նայէ՛ իմ մտքէս անցած չէր:

— Իմ աչքէս ի՞նչ կը փախի քի, կ'ըսէր համեստօրէն:

Իրրեւ քաղաքական մարդ, հայկական խնդրով ալ
զբաղեցաւ անշուշտ: Յեղափոխականներուն դէմ սկսաւ
յարձակիլ այն օրէն երբ Պապը—Ալիի ցոյցէն ելք ծլած
եւրոպական միջամտութեան մը յոյսը, երկար ատեն յոյ-
սի վիճակին մէջ մնալէն վերջ, ա՛լ ցնորքի մը յիմարու-
թիւնը սկսաւ առնել ամէնուն աչքին: Իր բռնկած ճարտա-
ասնութեան զլխաւոր նիւթերէն մէկն ալ ատ էր:

— Ի՞նչ բրին անպիտանները... ո՞ւր է ազատութիւն,
ո՞ւր է թաղաւորութիւն... քանի՞ հողի են, ի՞նչ են, ո՞վ
են... ի՞նչ օգուտ ունեցաւ իրենց բրածը... վնասէն դատ.
խանութի յաճախորդները կիսով չափ պակսեցան, կ'ը-
սէր Մարտիկ աղա, առիթը չփախցնելով յեղափոխա-
կաններուն կռնակը բեռնել իր գրութեան հետեւանքները:

Բայց իր զայրոյթը գաղաթնակէտին հասաւ այն օրը
որ՝ իրմէ զրամ պահանջելու եկած յեղափոխականի մը
հետ՝ իր ծառաներուն, պաշտօնեաներուն հետ վարուածին
պէս վարուիլ ուզելով, առաջին խօսքերէն իսկ անոր երեսին՝
«Կորսուէ՛ սրկէ, ա՛նամթ, ազդին առչափ վնաս հասցու-
ցիք, դեռ ստա՛կ կ'ուզէք կոր... Հիմա քեզի ոտականին
կուտամ» պոռալէն ետքը, ստիպուած էր լռել եւ ուզուածը
տալ՝ յոյցուած ատրճանակի մը կատակ չվերցնող ըս-
պանալիքին առջեւ սարսափահար:

— Փառաւոր կերպով վճնտեցի սրիկան, կը պատմէր
տեսարանը իր բարեկամներուն Մարտիկ աղա, պատուա-
կան կերպով լուալէս ետքը: Ես ան անամթներուն ստակ
մի տամ... ան խայտառակները չլին որ...

Ու հարիւրերորդ անգամը ըլլալով, կը վերսկսէր իր
փիլիպպեանը:

Մարտիկ աղա, բնականաբար, թաղականութիւն ալ
ըրած էր: Խակիւտարի Եէնի—Մահալլէի եկեղեցիին թա-
ղական եղած էր, քանի մը ամիս միայն, իր զիտատորի
վարմունքէն վիրաւորուած, կատաղած պաշտօնակիցներուն
թշնամական ու պաղ ընթացքին առջեւ ստիպուած ըլլալով
հրաժարիլ:

Իր վաճառատան կազմակերպութեան, վարչութեան
նոյն գրութիւնը տունն ալ: Իր առտունները ու իրիկունները
յատկացուած էին տանը «բէրսունէլ»ին — ինչպէս կ'ըսէր
ինք — հրահանգմանը, հարցաքննութեանը, համարառու-
թեանը: Ճշմարիտ բանակ մը ծառաներու, խոհարար,
կառասպան, ձիադարման — թէեւ, խօսքը մէջերնիս, եր-
բեք չէր համարձակեր ձի նստիլ, — պարտիզպան, սպա-
սուհի, դոնապան, ո՛րքան որ կ'ուզես: Աշխատութիւնները
բաժնուած էին ծառաներուն մէջ, սանձգութիւնները խըս-
տիւ արգիլուած:

— Կարդ կանան պէտք է, կ'ըսէր, ամէն մարդ իր
գործը:

Առտունները կ'կազմէր ինչ որ ինք կ'անուանէր «ճա-

ռաներու ժողով»: Մեկնելու վրայ, հովանոցին կրթնած,
պարտէզին լայն բացուած դրան առջեւ, սպասող շքեղ
կառքին դիմաց, բարձրաձայն իր հրահանգները կուտար,
իր շուրջը — իրրեւ սպաներ իրենց պետին — բոլորուած
ծառաներուն, խրատներ, հրամաններ, կարգադրութիւն-
ներ, փոփոխութիւններ: Աւարտելէ վերջ, կը հարցաքնն-
ներ զանոնք իրենց օրուան ընկերներուն վրայ, կը հաւ-
նէր կամ կը սրբազրէր, զլիսի շարժումներով, ու վերջա-
պէս սա հանդիսաւոր խօսքով կը ճամբէր զանոնք:

— Ամէն կերպով ջանացէք պարտականութիւնսիդ կա-
տարել. վա՛յ ձեզի եթէ իրիկունը պակաս բան մը գտնեմ:
Իրիկունը, հազիւ վերադարձած, լայն էնթարիին մէջ՝
բազմոցին վրայ երկնցած, ծխափողը բերանը, զիշերուան
գտակը մինչեւ խոժոռ յօնքերը իջած, մէկիկ մէկիկ կը
կանչէր ծառաները ու համարառութեան կը սկսէր:

— Կիրթկո՛ս, ի՞նչ բրին նայինք, ըսածնիրս ըրի՛ր:

— Այո, էֆէնտի, ամենքն ալ ըրի:

— Ի՞նչպէս ըրիք նայինք:

— Չեր ըսածին պէս, էֆէնտի:

— Ես ի՞նչպէս ըրի նայինք, դուն ի՞նչպէս ըրիք, ըսէ՛:
Ծառան կը պատմէր իր բրածները, այսինքն Մար-
տիկ աղային առտուն ըսածները, զորոնք իրեն կը կրկնէր,
կը վերադարձնէր՝ իրը հաւատարմօրէն՝ գործադրուած:
Ասիկա սակայն Մարտիկ աղային գործին չէր գար, որ
առիթ մը կը գտնէր պոռթկալու:

— Բայց, էֆէնտի, դուք ըսիք առտուն:

— Ե՛ս ըսի մի... ես ատանկ բան ըսի... հա՛յտէ
կորսըւէ սրկից, անամթ:

Ասիկա՛ երբ ծուլութիւնը զինքը բազմոցին գամէ:
Աւելի գէշ երբ քննական պտոյտը սկսի պարտէզին մէջ,
բանջարանոցին, ախոռներուն, շերտոցին մէջ:

— Ո՞վ քեզի ըսաւ ասիկա: Սըւտնք վերցո՛ւր սրկից:
Ծօ Սա՛րգիս, աս ինչո՞ւ հոս գրեք ես: Չիքը ինչո՞ւ կը
նիհարնան կոր: Կառքը ինչո՞ւ չէ լուացուեր:

Ինք անձամբ պառտի թէ հարցաքննէ, Մարտիկ աղա
միշտ գժգոհ է:

— Պարապ բան է, ասոնք ամենքն ալ ճամբելու է,
կը յայտարարէ դիմացի բազմոցին վրայ նստած ծեր մօրը,
ասոնցմէ խեր չի կա՛յ:

Տարիներէ ի վեր կը կրկնէ այն խօսքը: Ծառաները
միշտ հոն են:

Եկող գացողները անպակաս, այնքան հրապուրուած
իր աղջկան ազնուական զեղեցկութենէն որքան իր սեղա-
նին շտայլ հիւրընկալութենէն: Հպարտ ու արհամարհոտ
աղջիկ մը սակայն, որ չերեւնար գրեթէ եւ որ մերձած է
քանի մը առաջարկութիւններ:

— Արդեօք հօրը պէս աղջիկն ալ սրոշած է շամուս-
նանալ, զիտել կուտան շարափառներ:

Մարտիկ աղային էն մեծ հաճոյքը ատ է, սեղանին
վրայ թէ սրահին մէջ, զինքը շրջապատուած տեսնել բազ-
մաթիւ ունկնդիր պոռթկումներով, խօսիլ, ճառել, ենթադրել,

խորհրդածել, քաղաքականութեան վրայ, հեռագիրներուն վրայ, ազգային խնդիրներուն վրայ, սրբազրել ուրիշին կարծիքը, հեզնական՝ երբ անիկա արտայայտուած է իր խօսքերէն անշատ կերպով, բռնապետական ու դիւրազրդիւ երբ իրենին զիմացրուի:

— Ատ ի՞նչ պարասլ խօսք է ճանր՛մ... կը սխալին կոր... ատ ատանկ չէ՛, նայէ խնդիրը ի՞նչ է:

Կամ,

— Ատ ի՞նչ տղայական ենթադրութիւն է... դուն իմ ըսածս նայէ... ատ ի՞նչ ապուշ խօսք է:

Բարկանալու շատ տրամադիր, բարկութիւնով մը որ կը բռնկի ու կը մարի յարգի կրակի մը նման, որ կը ցայտէ ու շուտ կ'իջնէ Սէյի ջրի փրփուրին պէս:

Երբեմն Մարտիկ աղան սանկ խօսքեր ունի:

— Ի՞նչ խելացի մարդ է պէ՛... մարդը բոլոր ըսածնե-րուս իրաւունք տուաւ: Ես ատանկ մարդիկը կը սիրեմ:

Յորեկ մը յանկարծ ընդհանուր հանգարտութեան մէջ պայթեցան օգոստոսի Դրօշակեան ուսմբերը, ջարդի արիւնոտ ցայտերով, ահռելի ժայթքումներով, հայ սրտե-րու մէջ խելացնոր սարսափի արձագանգումներով: Մար-տիկ աղա, մագապուր պրծած մահուան վտանգէն, ընտա-նիքով Մեծ-Կղզի ապաստանեցաւ: Ամիս մը հոն կենա-լէն վերջ, որու միջոցին մտքէն չէր անցնէր հրամայել, յանդիմանել, շտիկել, խանութ, տուն, կալուած, ամէն բան Պոլիս ձգելով, շունչը Ալեքսանդրիա առաւ, ուր համե-լուն պէս, երկարատեւ ծովապահութեամբ մը ալ աւելի զրդուած խօսելու, շարժելու պէտքէն մտրակահար՝ կը զիմէր դաղթականներու կեղրոն դարձած եկեղեցին, ուր զինքը տեսանք արդէն:

(Շարունակելի)

ՊԱՐՈՅՐ

ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԸ Կ. ՊՈԼԻՍ

Գ

Գերմանիոյ մէջ, «խաղաղ երկրակալութիւն» կ'անուա-նեն աստիճանաբար թիւրքիոյ տիրելը: Ո՛չ բառը, ո՛չ գաղափարը նոր են: Բոշէր կ'ըսէր արդէն, Պալքանեան թերակղզիին եւ Փոքր-Ասիոյ մասին խօսելով. «Հոն է սր, խաղաղ երկրակալութեան ճամբով, կարելի է ստեղ-ծել նոր Գերմանիա մը որ մեծութեամբը, բազմամարդու-թեամբը, հարստութեամբը գերազանցէ հին Գերմանիան, եւ ապահովագոյն պողոտան կազմէ ընդդէմ Ռուսիոյ եւ համապարտութեան»: 1850ին, Լուսովի Ռոս, իր «Փոքր-Ասիա եւ Գերմանիա» գրքին մէջ, կը գրէր. «Գաղթակա-նութեան հոսանքը կ'երթայ դէպի Արեւմուտք, Հիւսիս-յին ու Հարաւային Ամերիկա եւ Աւստրալիա: Ետտ հազ-

ուազիւս են անոնք որ Արեւելքի մասին կը խորհին, մեղի այնքան մօտ: Գալով ինձի, օղտակար կը համարիմ՝ նոր փորձ մը ընել՝ հանրային ուշադրութիւնը Փոքր-Ասիոյ մէջ գերման հաստատութիւններ հիմնելու մտածման վրայ կեղրոնացնելու համար:»

Գաղափարը ճշգրտուեցաւ Գերմանիոյ միութենէն յե-տոյ: 1875ին, Բրէսէլ ճարտարադէտը, որ վերջէն նախա-ձեռնարկ պիտի ըլլար մեծ արածութիւններու եւ երկաթու-ղիներու մեծ շինութիւններու, «Ազգային աշխատութեան կազմակերպութեամբը Անատոլի կերպարանափոխու-թիւնը» անուն տետրակի մը մէջ՝ կը պարզէր յատակա-ձեւը ընկերութեան մը որուն գործը ըլլար երկաթուղիներ բանալ, կալուածատուարը հաստատել եւ գերման գա-լութիւններ կազմակերպել: 1880ին Պերլին հիմնուած «Ա-ռետրական եւ ճարտարագործական ընկերութիւնը» յի-սուն միլիոն մարք զրամազլուով, այս կոչին պատասխա-նել թուեցաւ: 1881ին «Լիւսիֆէր» շոգենաւին գիտական պտոյտը կազմակերպեց: Աւստրիական շոգենաւին մէջ կը գտնուէին Պոնի համալսարանին քաղաքական անտեսու-թեան ուսուցիչ եւ յիշեալ ընկերութեան նախագահ Տր. Լէօհնիս, Հոնտոսեան Բրուսիոյ երկաթուղիներուն ընդհա-նուր տնօրէն Պ. Հայնման, վաճառականներ, գործարա-նաւէրներ, նաւահանգիստներու, հանքերու եւ անտանե-րու մէկ քանի ճարտարադէտներ, եւ բժիշկ մը՝ կլիմայա-բանական ուսումնասիրութեանց համար:

Պատուիրակութիւնը իր ճամբորդութենէն դարձին հե-տը բերաւ մեծահատոր յիշատակաշիր մը, որ Գերմանիոյ մէջ մեծ անուն հանեց: Տնտեսագէտներուն երազներուն կը յաջորդէին զրական ծրագիրներ: Գերման կառավա-րութիւնը հասկցաւ թէ գաղթականութեան հոսանքը դէ-պի անձանօթ երկիրներ ուղղելէ առաջ, պէտք էր գե-տինը ուսումնասիրել, մանաւանդ թափանցողութեան ճամ-բաներ բանալ հոն: Այս նախաշաւիղ խաշխատութեանց համար, յոյսը զրած էր սուլթանին բարեյօժարութեանը վրայ, որ տարակուսելի չէր: Ասոր շնորհիւ, Քիբերդ աշ-խարհադիրը կրցաւ Փոքր-Ասիոյ բարտէսը պատրաստել: Ազատօրէն պտըտեցաւ Եգէական ծովէն Պարսից ծոցը եւ Սեւ ծովը, առանց բնաւ ընդմիջուելու իր աշխատութեան մէջ, ո՛չ ալ ո եւ է կերպով խոշտանգուելու. բոլոր թիւրք իշխանութիւնները փոյթեանսն կը ծառայէին վիճակմ կայսեր պաշտօնական աշխարհապրին: — Եւ սուլթանին այդ բարեյօժարութեանը շնորհիւ, Գերմանները ձեռք բե-րին երկաթուղիներու թանկագին արտօնութիւնը:

Գերմանական զրամազլուիւր երկու մեծ երկաթուղի բացաւ թիւրքիոյ մէջ: Մին, Սէլանիկէն մինչեւ Մանաս-զըր, սահմանուած էր միանալու մէկ կողմէն թեսալիոյ հելլենական գծերուն եւ միւս կողմէ Ալբրիականի նաւար-կութեան գծերուն, Տուրացոյցի եւ Ալլոնայի ճամբով: Երկրորդն զգուարութիւններ եւ վերջին տարիներու քա-ղաքական դէպքերը կը թուին կառեցուցած ըլլալ այդ գը-ծին ընդլայնումը: Բայց, Արեւելեան երկաթուղիներուն աւստրիական մեծ ընկերութեան գծերուն միացած եւ ա-նոնց հետ միեւնոյն վարչութեան ենթարկուած, գոնէ ա-

ուեստրական լաւ գործիք մըն է «գէպի Արեւելք յառաջանալու» գաղափարին ի սպաս: Հելլենական պատերազմը անոր ռազմագիտակին կարեւորութիւնը ցոյց տուաւ միանգամայն: Բայց զեռ ապարդիւն կը մնայ գաղթաւորման տեսակէտով. զեռ կարելի չէ տեսական հաստատութիւններ մտաբերել այդ մակեդոնական երկիրներուն մէջ, որոնք տեղացի ազգայնութեանց փակարանն են: — Միւս զիծը, որ Թիւրքիոյ էն կարեւորն է, Վասիտի ասիական եզերքէն կը մեկնի եւ կ'երթայ Էնկիւրիւ սը հիմա առժամաբար կանգ առած է, աչքը յառած գէպի կեսարիա, Տիւարպէքիւր, Պաղտատ ու Պարսից Ծոցը, — ապագայ գործիք այն հսկայական ձեռնարկին սը օր մը ցամաքային հաղորդակցութեան մէջ պիտի դնէ Հնդկաստանը եւ Եւրոպան: Էսկիլէհիբէն ձիւզ մը գէպի հարաւ կ'իջնէ Գարամանիա, ու Քոնիայի մէջ կը սպասէ խոստացուած երկարաձգման:

Գերմանացիները երկար ատենէ ի վեր կը ցանկային ձեռք բերել արտօնութիւնը այս գծերուն, որոնք Թիւրքիոյ մէկ քանի ամէնէն աւելի արտադրող երկիրներէն եւ ամէնէն աւելի սեղմ առեւտրական հանրութեաններէն կ'անցնին: Բայց, ուրիշներու կողմէ նախապէս հաստատուած իրաւունքներուն պատճառաւ, հարկ եղաւ որ սուլթանը Գերմանացիներուն օգնութեան դար քմահաճ արարքով մը: 1879ին, անգլիահելլենական խմբակ մը իր վրան առած էր շահագործումը Հայտար փաշա-Իզմիտի գծին, զոր կառավարութիւնը շինած էր: Այդ խմբակը միանգամայն իրաւունք ձեռք բերած էր զայն մինչեւ Էնկիւրիւ երկարելու: Ուսումնասիրութիւնները, որոնք Բ. Գրան յանձնուած եւ անկից վաւերացուած էին, երբեք չստացան սուլթանին անձնական հաւանութիւնը: Ապաւիլ Համիտ, հազարումէկ պատրուակներով, տարիներով քրքրեց գործը: Այդ միջոցին, ֆրանքեանգլիական նոր ընկերութիւն մը կազմուած էր՝ նոյն այդ Էնկիւրիւի գիծը շինելու համար: Անգլիահելլենական խմբակին պէս, ֆրանքեանգլիական ընկերութիւնը պետութեան բոլոր պաշտօնասններուն հաւանութիւնը ձեռք բերաւ, եւ, աւելի բարբարոստիկ, պաշտային մէջ ալ քիչ շատ նպաստաւոր ընդունելութիւն գտաւ: Ֆրանսացի ճարտարագէտներ, գծին մանրամասն ուսումնասիրութեան ձեռնարկելու արտօնութեամբ, Անաստու մեկնեցան: Երկու ամիս չէր անցեր որ հոն էին, երբ սուլթանը յանկարծ հոչակեց առաջին արտօնատէրներուն զրկումը, եւ, 1888 հոկտեմբեր 4ի հրովարտակով, անոնց բոլոր իրաւունքները յանձնեց Տէօյշ Պանքի ներկայացուցիչ Պ. Քաուլայի: Գերման գիւանալիտութիւնը ձեռքի տակէ աղէկ աշխատած էր, եւ իրեն աջակից գտած էր Կ. Պոլսոյ անգլիական գեսպան Սըր Ուիլքեմը Հուայը, որ այս ամբողջ գործին մէջ քաղաքական հեռաւոր նպատակներ ունէր, (այսինքն Փոքըր-Ասիոյ մէջ Գերմանիոյ թուրք կանգնիլը ընդգէմ Ռուսիոյ): Անգլիացի արտօնատէրները իրենց գեսպանատնէն լքուած, բռնութեամբ երկրէն դուրս հանուեցան: 130,000 ոսկի տրուեցաւ իրենց իր փոխարինութիւն:

Գերմանացիները բացառիկ պայմաններ ձեռք բերին:

Բացի ընդհանուր հասոյթի երաշխաւորութենէ մը, սուլթանը անոնց շնորհեց — ճարտարագործական տարեգրութեանց մէջ չլսուած իրողութիւն — շորս առ հարկեր տուի երաշխաւորութիւն մը՝ շինութեան միջոցին ծախսուած բոլոր զւժարներուն համար: Յետոյ, 1893ին, Անատոլի օսմանեան ենկաթուղիի ընկերութիւնը նոր արտօնութիւններ ձեռք բերաւ Էսկիլէհիբէն Քոնիա, Էնկիւրիւ կեսարիա, եւ ի հարկին Էնկիւրիւն Սըվազ գիծեր շինելու համար: (Այս երեք գիծերէն մին միայն շինուած է մինչեւ հիմա, Քոնիայինը:) Այստեղի երկաթուղիին անգլիական ընկերութիւնը այդ միջոցին կ'առաջարկէր իր գիծը երկարել մինչեւ Էսկիլէհիբէն, առանց հասոյթի երաշխաւորութիւն պահանջելու: Սուլթանը, իր քաղաքական սխաղէմին հաւատարիմ, նախընտրեց Գերմանները եւ անոնց խնդրած արտօնութիւնները ու պահանջած երաշխաւորութիւնները: Այս գերման գիծերուն շինութիւնը առաջ տարուեցաւ բանիմացութեամբ մը, արագութեամբ մը եւ խնայողութեամբ մը, որուն վրայ կը սքանչանան մասնագէտները: Շահագործումը կը գտնուի առաջնակարգ մարդու մը սնօրինութեան տակ եւ, Էնկիւրիւի գծին համար, ելմտական անյուսալի արդիւնք կուտայ:

Այդ երկաթուղիի հազար քիլոմետրերուն երկայնքն է որ Գերմանիա «իրեն սեփական երկրագործական մեծ գաղութ մը» կը պատրաստէ: Բազմաթիւ ճամբորդներ այցելած են զայն, եւ ապագայի գեղեցիկ յոյսեր բերած են: Բացման առաջին կառախումբին մէջ, Ֆրանսէր Կոյց գործավարը կը մտածէր «այն բազմաթիւ գերման գիւղացիներուն որոնք ծովերէն անդին կ'երթան անսաղջ բազմ մը փնտուելու, մինչդեռ կրնային հոս՝ առեւտրական մեծ ճամբաներուն մօտ՝ ընդարձակ ու բեղմնաւոր ստալաբէզ մը գտնել, եթէ բաւական բազմութեամբ գային, եթէ կարենային միահաղոյն կազմակերպուիլ եւ միութիւն ու խաղաղութիւն պահել իրարու մէջ:» Քիչ յետոյ, Նասուան աշխարհագիրը, որ սէնտիքայի մը կողմէն պաշտօն ստացած էր ընդհանուր երկրախուզութիւն մը կատարել Ոսկեղջիւրի փիերէն մինչեւ Եփրատի աղբերակունքը, կը խօսի Ամերիկայի գերման գաղթականներուն մասին: «Որոնք հարկաւորաբար բոլորովին կ'օտարանան հին Գերմանիայէն, մինչդեռ գերման գաղթականները Արեւելքի մէջ պիտի պահպանէին իրենց կապերը մայր-հայրենիքին հետ եւ անոր հետ կանոնաւոր յարաբերութիւններ ու առեւտրական գործօն փոխանակութիւն մը պիտի հաստատէին:» Ուրիշ գրողներ աւելի կը ճշգրտեն, վերջնական ծրագիրներ կ'ուրուագեն: Տր. Քարլ Քրիկէր, ի միջի այլոց, կը ջատագովէ կանոնադրեալ գաղթաւորում մը՝ զբաղաւորութիւններու հզօր ընկերութեան մը սնօրինութեան տակ: Մասնաւորապէս մասնանիշ կ'ընէ Սապանձայի լճին կողմերը՝ Սաքարիայի հովտին հետ մէկտեղ՝ ձիթենիներու մշակութեան համար, զայն շրջապատող բարձունքները՝ այգիներու եւ թթենիներու համար, Էսկիլէհիբէն Քեթութահա տարածուող գաշտերը եւ Բուրսաքի հովիտը՝ ցորենի համար: Երկաթուղիին ընկերութիւնը պէտք է որ վերին տեսչութիւնը ստանձնէ, եւ գերման կառավարութիւնն ալ ամէն տեսակ առաւելութիւններ ձեռք բերէ սուլթանէն, — այսինքն ապահարկութիւն (հարկէ, տուր-

քէ զերծ մնալ), ստացուածքի ապահովութիւն եւ զեռ ու-
րիշ շատ բաներ: Սուլթանը ինչո՞ւ զլանայ: Գերման դադ-
թականը թիւրքիոյ ապագայ փրկիչն է: «Ինչ կրնայ ըլ-
լալ Անաստուն, կը հարցնէ Պ. Ռ. Մէնց: Մէկ քանի
վարչական անօրինութիւններ ի նպաստ զերման դադթա-
կաններուն, մէկ քանի ազդեցիկ ու զարդացած եւրոպացի
պաշտօնատարներ ու ամբօրէն հաստատուած իշխանու-
թիւն մը, — եւ ասիկա պիտի բաւէ այս երկիրներուն մէջ
վերակենդանացնելու՝ հին առեւտրական պէս՝ բարդաւան
մշակութիւն մը, եւ աւելի՛ ազդուօրէն պիտի պաշտպանէ
թիւրք պետութիւնը քան իրեն յամառիլ մնալը ծթած սո-
վորութիւններու մէջ:» Վերջապէս, 1893ին Ֆրանքֆուրդ
ըրած բանախօսութեամբ մը, Երկաթուղիներու ընկերու-
թեան հոգաբարձ Պ. Հլրման պարզեց թէ զերման դադ-
թակարումը նպաստաւոր պայմաններու մէջ կրնայ կա-
տարուիլ այն օրը միայն ուր գաղթականներուն ստացուած-
քին բացարձակ ապահովութիւնը ձեռք բերուի թիւրք կա-
ռավարութեան: Կ'աւելցնէր թէ վեցէն ութ հոգինոց
պզտիկ խումբերու հաստատութիւնները միայն թոյլա-
ւորուած էին, որովհետեւ «բաղաբաղականութիւնը կ'արդիւն
խմբովին գաղթականութիւնը»:

Ասիկա ցոյց կուտայ թէ զերման արշաւանքը ճամբան
գոցուած դասը է իր առջին, ո՛չ միայն պետութեանց նա-
խանձութիւնէն, այլ նաեւ թիւրք իշխանութեանց չկամու-
թենէն: 1893ին, Անատոլիի երկաթուղիներուն տրուած
երկրորդ հրովարտական առեւտր, միջազգայ մը պատահե-
ցաւ որ Գերմանիոյ ծրագրիները փոխեց: Ընկերութիւնը,
զետպանատան կրթնած, ճամբան երկայնքը հողի մեծ
արտօնութիւններ և այդ ընդարձակ գետնին վրայ բնակող-
ներուն համար կատարեալ ապահովութիւն կը խնդրէր:
Սուլթանը, իր համակրանքէն կուրցած, իր գերիշխանու-
թեան լարուած թակարդը չտեսաւ: Հաւանք էր, և ուզ-
ուածը ամբողջ շնորհելու վրայ էր, երբոր հայրենասէր մը
յաջողեցաւ քայքայել զերմանական գործերուն մէջ շահ
ունեցող պալատական սաղրանքը: Վեհապետին աչքին
առջեւ զրին յիշատակազիր մը որուն մէջ ցոյց կը տրուէր
Անատոլիի մէջ հաստատուած պզտիկ Գերմանիայի մը
վտանգը: Ապաիւ Համիտ հասկցաւ որ, զինքը զգուշա-
ցնելու համարձակելու չափ անձնուէր բարձրաստիճան
պաշտօնատարին ետեւ, իսլամական անհաշտ կարծիք մը
կար. մերձեց խնդրուած արտօնութիւնները: Վերջերս ալ,
անգլիական մեծ օրագիր մը Ասիոյ նահանգներուն Գեր-
մանացիներով լեցուիլը մասնանիշ ըրած ըլլալով, կուսա-
կաններուն հրամայեց թիւրքիա հաստատուած Գերմանա-
ցիներուն ժարգահամարը կատարել, եւ նորեկները՝ իրենց
հիւպատոսին խնդրանքովը միայն ընդունիլ: Իրաւ ալ է
որ, ուրիշ ազդեցութեան մը տակ, Սուրբիոյ զերման դադ-
թականներուն վազըֆ կալուածները միւլքի վերածեց:
Այն վերջովը որ Գերմանացիները այսօր ունին իր բով,
կրնան ամէն բան յուսալ, նոյն իսկ Անատոլիի գաղթա-
ւորման նպաստաւոր տեսնել զանի:

Սպասելով ասոր, Երկաթուղիներու ընկերութիւնը,

ի մեծ օգուտ իր շահագործման եւ հաւանօրէն նաեւ ա-
պագայ մեծ զիտուամերով, իր գծերուն երկայնքը պատ-
րաստութիւնները կը տեսնէ: Ընկերութեան հոգաբար-
քնիչը տարուէ տարի կը հրատարակէ անդեկազիր մը
որուն մէջ ուսումնասիրուած են իր սքանչելի կայարանի
շուրջը մշակութեան պայմանները, վարուցանի լաւագոյն
եղանակները, պտղատու ծառերու անկարաններու, սեր-
մընցուի արտերու եւ պզտիկ աղարակներու հաստատման
յատակաձեւները: Ընկերութիւնը նոյնպէս իր ծանցով
գերմանական վարժարաններ կը հաստատէ, ուր պարտա-
ւորիչ կերպով կը զրկէ իր պաշտօնեաններուն զաւակները,
նոյն իսկ երբ պաշտօնեանները զիպուածաւ Գերմանացի
չեն: Էնկիւրիի վարժարանը 460 աշակերտի համար տեղ
ունի: «Գերմանիա, կ'ըսէ Պ. Հլրման իր Ֆրանքֆուրդի
բանախօսութեան մէջ, յառաջդիմութիւններ բրտէ և փոքր-
Ասիոյ ներսերը. էսկիւրիի մէջ, օրինակի համար, փո-
ղոցներուն մէջ շատ կը լսես զերմաներէն խօսակցութիւն:
Երկու գերմանական գարեջրատուն կան հոն արդէն եւ
ճաշարան մը՝ զերմաներէն նշանակով:»

Անհատական նախաձեռնութիւնը սպասած չէ քաղա-
քական երկար պատրաստութիւններու ի զուլի ելլելուն:
Առաջին հոսանքները զիմած են զեպի ամէնէն դուրամա-
տոյց վայրերը: Սուրբիոյ ծովեզերքին վրայ զերմանական
հաստատութեանց թիւր շատ մեծ է: Պերլինի առեւտրա-
կան աշխարհագրութեան ընկերութիւնը, Պաղեստինի
երկրախօսութեան գերման ընկերակցութիւնը եւ մէկ
քանի ուրիշ միութիւններ իրենց ներկայացուցիչներով
ծածկած են Արեւելքը, եւ քիչ շատ ամէն կողմ՝ ազգային
կեդրոններ հաստատած: Գերմանացիները ո եւ է ճիզի
առջեւ ընկրկած չեն՝ Արեւելքի ծանօթութիւնը ձեռք բե-
րելու համար: Կը յիշուի ճարտարապէս մը որ Կ. Պոլսոյ
Յունաց առեւտրական վարժարանը մտաւ եւ երեք տարի
անցուց հոն իբր մարմնամարզի ուսուցիչ: Հոն, երիտա-
սարգ Հելլեններուն ֆիզիքական կրթութեանը սատարե-
լով հանգերձ, երկրին լեզուները, բարբերը եւ առեւտրա-
կան սովորոյթները սորվեցաւ: Երբոր պէտք եղածին պէս
պատրաստուեցաւ, յանկարծ երեւան եկաւ իբր Պերլինի
ընկերութեան մը պատուիրակը, եւ իզմիրի ժող մեծ ա-
ղարակ մը հիմեց որուն բազմաթիւ պաշտօնէութիւնը
Գերմանիայէն բերուեցաւ, տեղական տարրերը բայար-
ձակապէս զուրս թողլով:

Հոսանքը աւելի զգալի կը դառնայ ամէն կողմ, քա-
ղաքներուն մէջ մանաւանդ, ուր օր օրի կ'աճի յամրապէս
ու ապահովապէս: Թիւրքեւհիւնական պատերազմէն ա-
ռաջ, ամիսը առ առաւելն յիսուն Գերման կը հասնէր
թիւրքիա. հիմակ, ամէն ամիս հինգ հարիւր Գերման կը
հասնի: Քաղաքական համակրութիւնները այնչափ կը
քաշեն զիրենց սրբան տրեւը. իրենց հայրերը իտալիա
կ'երթային. իրենք, Արեւելք կ'երթան, ինչ որ, փոխա-
զրութեան միջոցներու յառաջդիմութիւնը ի նկատ առնե-
լով, նոյնքան զիւրիւն է:

Գերմանիա նոյնպէս Արեւելք կը զրկէ ցեղ մը զոր ո՛չ
Ֆրանսա եւ ո՛չ Անգլիա մատակարարած են երբեք, այն է

պղտիկ խանութպաններու ցեղը: Կ. Պոլսոյ մէջ, Գերմանացիները 1897 մարտին — այսինքն Սուլթանին ու Քայզերին յաղթութեանը յաջորդող խոշոր հոսանքէն առաջ — 113 մանրավաճառի խանութ ունէին, մինչդեռ Ֆրանսացիները 28 միայն: Էսկիշէհէր, ուր կը գտնուին Անատոլի երկաթուղիներուն ընկերութեան գործարանները, թիւրք բաղբին քովն ի վեր գերմանական բաղբը մը երեւան եկած է. այդ օտար մանրավաճառներուն կծծիութիւնը արեւելեան սակաւապէտութեանը յաղթած է, եւ տեղացի խանութպանները կարող չեն մրցիլ այդ Գերմանացիներուն հետ որոնք գինները հետզհետէ կը կտարեն:

Տարեկան վերջին վիճակագրի մը համաձայն,

35 գերմանահպատակ 893,676 զրուշի կալուած ծախած, եւ 78 գերմանահպատակ 2,148,654 զրուշի կալուած գնած են:

109 ֆրանսահպատակ 5,292,600 զրուշի կալուած ծախած, եւ 128 ֆրանսահպատակ 4,188,330 զրուշի կալուած գնած են:

Ըսել է, գերմանական կալուածատիրութիւնը 1,254,978 զրուշի յաւելում մը ունեցած է, մինչդեռ ֆրանսականը՝ 1,104,270 զրուշի նուազում մը:

Վաճառականութեան եւ ճարտարագործութեան մէջ, նոյն տեսարանը: Երկար ատենէ ի վեր, գերման գիււանագիտութիւնը նախաձեռնարկ եղած էր, իր ետեւէն քաշելով պաշտօնական ճարտարագործութիւն մը որուն ձեռնարկները յաջողցնել տուած էր: Այսպէս, Ապտիլ Համար ստիպեց մարանաւեր ապսպրելու, որոնց փափաք չունէր, և հրացան մը գնելու, որուն պէտք չունէր: Թիւրք թորփիլանաներու առաջին ապսպրանքը տրուեցաւ 1885 ին: Ֆրանսական հաստատութեան մըն էր (Ֆոոմ է Շանգիէ) որ բաժին խնամ ատիկա: Ատոր յաջորդեց երկրորդ ապսպրանք մը, ուսկից անգլիացի գործարանատէրները օգտուեցան: Մնացեալ ամբողջը Գերմանացիներուն գնաց: Թիւրքիոյ 27 թորփիլանաներու տորմիզին 17ը Քիլի եւ Էլզլինկի նաւարաններէն ելած են: Գալով հրացաններուն, զօրավար Ֆոն տէր Կոյց սկիզբները օսմանեան բանակին օգուտը միայն ի նկատ ունէր. «Դուք, կ'ըսէր, շատ լաւ հրացան մը ունիք, Մարթինի Հէրին, զոր Թիւրքիոյ մէջ ամէն մարդ կը ճանչնայ: Պահեցէք ասիկա, և ետքէն կը մտածէք զայն կատարելագործելու, երբոր ձեր զօրքերը աւելի լաւ մարզուած ըլլան: Ամէն բանէ առաջ կարելորդ բանակնիդ վերակազմելն է: Կարելի չէ միանգամայն թէ՛ նոր կանոններ եւ թէ՛ նոր զէնքի մը գործածութիւնը սորվեցնել:» Թիւրք նախարարը թերեւս համոզուէր ասոր, եթէ Ֆոն տէր Կոյց փաշա Պերլինէն հրաման ստացած չըլլար գերման ճարտարագործութեան ոյժ տալու:

1887ին առաջին ապսպրանք մը տրուեցաւ Մաւզերի տան: Այն միջոցին ուր արդի բոլոր բանակները կը նկերտակին փոքր տրամագծով հրացանի ինդիքը լուծել, Սուլթանը 9 միլիմետր 5 նոց 300,000 հրացանի մթերք մը զիզեց, կնճուտ եւ դժուար գործածուելիք հրացաններ: Ապտիլ Համիտ այնչափ լաւ հասկցած էր այդ հրացան-

ներուն անպէտքութիւնը որ զօրքին բաժնել չտուաւ զանոնք: Ատոր փոխարէն շատ սուղ գին մը վճարեց, հատին 3 ոսկի 60 զրուշ: Վոհմակ մը վազած Պոլիս թափած էր, իբր միջնորդ ծառայելու թիւրք կառավարութեան եւ գերման ճարտարագործութեան միջեւ: Իրաքանչիւր հրացանի գինը 15 ֆրանք աւելցուցած էին, յօգուտ եւրոպական միջնորդէրէն եւ թիւրք պախշիշին: Մաւզեր, այդ պարկեշտ միջնորդներէն եւ ամէն տեսակ ծախքերէ կործանած, ստիպուեցաւ զբաւի գնել իր գործարանը: Սակայն շուտով իր գէնը հանեց: 1889ին, 1887ի թիւրքական հրացանը Պերլինի մէջ շատ հին նկատուեցաւ. սուլթանին համար 7 միլիմետր 65 նոց փոքր տրամագծով հրացան մը հնարեցին, ուսկից 300,000 հատ գնեց, յետոյ ալ աւելի շատ:

Գերման գեսպանատունը կը հսկէր վճարումներուն կանոնաւորութեանը: Օսմանեան ելատական նախարարութիւնը ատկից աւելի ծանր փորձանքի հանդիպած չէր երբեք: Իրմէ 28,000 ոսկիի երաշխաւորութեան աւանդ մը պահանջուեցաւ, եւ կանխիկ զբաւ՝ յանձնուեցան կատարուելուն պէս: Գերման շոգենաւներ մինչեւ 20 օր նաւահանգիստը մնացած են՝ իրենց հրացանի եւ ուղիւթ մթերքի սնուակները պարպելէ առաջ, որովհետեւ դանձր պարապ էր: Թիւրքեւհլլենական պատերազմին առաջին հետեւանքը եղաւ նոր ապսպրանքներ բերել Մաւզերի: Ուրիշ գործարաններ ալ ուզեցին իրենց բաժինը ունենալ: Գերմանացիները սուլթանին թախանձեցին վերանորոգել իր հին նաւատորմը: Բարեբաղդաբար, Անգլիա եւ Ռուսիա օգնութեան հասան սուլթանին, որ ինչ ընելը չէր գիտեր: Ռուսիա սկսաւ իր աննւիրները պահանջել, եւ Անգլիա ալ իր բաժինը եթէ նաւատորմիդ վերանորոգելու ձեռնարկուէր: Եւ սակայն, գերման պաշտօնական ճարտարագործութիւնը յուսահատած չէ:

Բարձր սեղանաւորութիւնն ալ, որ երկաթուղիներուն գործին մէջ մտած է, իր յոյսերը ունի: Կ'ուզէ ձեռք գնել փոքր-Ստիոյ բոլոր երկաթուղիներուն վրայ: Բայց, այդպէս, Ֆրանսա ու Անգլիա իր գէմը կ'ըլլեն: Եթէ Գերմանիա 1,242 քիլոմետր երկաթուղի ունի շինուած որ 300 միլիոն ֆրանքի գրամապլուս մը կը ներկայացնէ, Ֆրանսա 1,300 քիլոմետր ունի՝ 336 միլիոն գրամապլուս: Պաղտատի գծին շինութեանը համար, որ առաջնակարգ կարեւորութիւն մը ունի, նոյնքան ֆրանսական ու անգլիական ծրագիր կայ մէջտեղ որչափ գերմանական:



Բայց այս պաշտօնական ճիգերը բան մը չեն՝ անհատական ճիգերուն բաղդատմամբ: Գերմանական պղտիկ վաճառականութիւնը քիչ ժամանակուան մէջ խոշոր դիրք մը բռնած է Արեւելքի հրապարակին վրայ: Ու զայն օրէ օր կ'ուժեղցնէ, մինչդեռ Թիւրքիոյ երկու խոշոր հայթայթիչները կը շատանան առաւել կամ նուազ յաջողութեամբ մաքառելով իրենց վերքը պահելու համար: Այս

առեւտրական կռուին մէջ, Գերմանիա առաջ կը տանի յարձակողականը, Անգլիա՝ պաշտպանողականի վրայ կը մնայ, և Ֆրանսա կը սկսի տեղի տալ: Առաջին կարգը դեռ Անգլիոյ կը մնայ, բայց Գերմանիա Ֆրանսայի հաւասարելու եւ նոյն իսկ զանիկա ետ ձգելով՝ երկրորդ կարգը բռնելու վրայ է:

Առեւտրական այս արագ ծաւալման պատճառները բազմապատիկ են: Գերմանական զեսպանատունը խոշոր գործերը պաշտպանելով շատացած չէ միայն. իր աջակցութիւնը տուած է ամէնէն փոքրերուն ալ, առանց վախնալու ստանձնելով շատ համեստ հոգեր: Գեսպանատան քարտուղարներ տեսուեցան որոնք կ'երթային մտերմաբար կալաթայի վաճառականի մը տեղեկութիւն հարցնել այս ինչ տանը արձէքին կամ այն ինչ վաճառականին կարողութեանը մասին: Հիւպատոսարաններն ալ իրենց կողմէն կ'աշխատին եւ կ'երեւայ թէ սքանչելի կերպով կը տեղեկացնեն Պերլինի առեւտրական նախարարը որ իր կարգին գերման վաճառականներուն կը հաղորդէ հրապարակին պահանջները եւ մրցման տկար կէտերը: Ամէն բան տեղի կ'ունենայ նշանաւոր յամառութեամբ եւ յարատեւութեամբ: Կ'ըսուի թէ Գերմանիոյ զեսպանուհի մը, Բերայի խանութներուն մէջ, գնելէ առաջ կը հարցնէր թէ իր ընտրած առարկաները գերմանականն էին, որոնք միայն լաւագոյններն են:

Թիւրքիոյ վերջին դէպքերը մեծապէս նպաստեցին այս պզտիկ վաճառականութեան: Բազմաթիւ հայ միջնորդներ, որոնք անգլիացի տուներու յաճախորդներ էին, անշարժութեան դատապարտուեցան՝ Անատոլի մէջ իրենց ճամբորդութիւնները արգելող քմահաճ տնօրինութեանց վրայ: Ուստի Եւրոպա փոխադրուեցան շատ պզտիկ զրամագլուխներով: Ամէն կողմ շատ աժան գնով նոյն ապրանքը փնտռելով, Գերմանիոյ ճարտարագործական քաղաքներուն մէջ թափանի մթերքներ գտան որոնց մով այսօր Արեւելքը կ'ողողեն: Բաց ասիկց, մաքսապաշտ գրութեան հետեւանքով եւրոպական ինչ ինչ հրապարակներու եւ մասնաւորապէս ամերիկեան հրապարակին փակման պատճառաւ, Գերմանիոյ ոյժը դէպի Արեւելքը դարձած է: Իր նորահաստատ ճարտարագործութիւնը յատուկ մեքենաներ ստեղծած է, և ուզուած ապրանքը կուտայ, փոխանակ նորաձեւութենէ անցած ապրանքին:

Կ. Պոլսոյ Ֆրանս. Առեւտրական սենեակին լրագիրը կ'ըսէ: « 17րդ դարուն, Ֆրանսա Թիւրքիոյ զխաւոր հայթայթիչն էր և գրեթէ անոր միակ գնորդը: Անգլիա յետոյ եկաւ Ֆրանսայի հետ մրցիլ Թիւրքիոյ մէջ, եւ բաւական թուով խոշոր ապրանքներ իր ձեռքը առաւ: Բայց ընդհանուր առմամբ, կարելի է ըսել թէ Ֆրանսացի ու Անգլիացի, երկուքն ալ իրենց յատուկ ասպարէզը ունենալով, իրարու շատ քիչ մրցում կ'ընէին Արեւելքի մէջ: Խրիմի պատերազմէն ետքը, Ֆրանսա եւ Անգլիա Թիւրքիոյ առեւտրական ամբողջ գործառնութիւնները կէսուակէս մէջերնին բաժնած էին:» 1870էն առաջ, անգլացի գնորդները խոնարհաբար կ'ազաչէին ֆրանսացի վաճառականներուն որ

ապրանք բերել տային իրենց: « Խորաքանչիւր յաճախորդի խնդրածին մէկ մասը միայն կուտային, և գնորդները իրարու հետ կը վիճէին՝ հասած ապրանքէն խոշոր մաս մը ձեռք բերելու համար:» Մրցման վախ չի կար, ուստի յաճախորդին համար քիչ մը խիստ էին: « Մէկէն ի մէկ, նոր ճարտարագործութիւններ, որոնց ստեղծումը չէր զուշակուեր, երեւան եկան: Գործարանները բազմացան Գերմանիոյ մէջ:» Նորեկները օգտուեցան հիներուն փորձառութեան եւ աւելի լաւ պատրաստուած գտնուեցան ինչ ինչ ապրանքներու համար: « Այդ մրցակիցները երիտասարդ ու արի էին: Յաճախորդին չսպասեցին. իրենց անոր ոտքը գացին: Գերմանացի առեւտրական ճամբորդներու հոյլեր, որոնք Ֆրանսերէն կը խօսէին, օսմանեան հրապարակներուն վրայ թափեցան. իրենց ապրանքները ֆրանսականներէն նուազ լաւ էին, բայց աղուոր տեսք մը ունէին եւ շատ աւելի աժան էին. վճարման մեծ գիւրութիւններ ընծայեցին. սիրալիր, հաճոյակատար, ճշգրտապէս երեւցան, եւ ապապրանքները վասակեցան:»

Գերմանիա անգլիական եւ ֆրանսական ապրանքին շատ լաւ նմանութիւնը շատ աժան գնով մատակարարելով, ամէնուն դէմ կը մրցի ամէն ապրանքի համար. կ'առաջարկէ ինչ որ կը ծախուի, ու աժան գնով կը շինէ ինչ որ խնդրես: Թիւրք մը իր հասկցած կերպովը բացատրեց ինձի կացութիւնը: « Մեծ հայրս պայուսակ մը գնեց Ֆրանսացիէ մը. երկու ոսկի վճարեց. կաշիէ էր: Հայրս Անգլիացիէ մը գնեց. մէկ ոսկի վճարեց. մովթէ էր: Ես, Գերմանացիէ մը գնեցի. երկու մէճիտիէ վճարեցի. ապիկուած խաւաքարտէ էր:» Ըստ երեւոյթին միեւնոյն պայուսակն է. ո՛չ ձեւը ո՛չ գոյնը փոխուած են, հապա միայն գինը եւ հետեւաբար տեսակը: Արդ, Թիւրքիա կ'աղքատանայ կ'որ եւ չի քաղաքակրթութիւր կ'որ: Սուլթանն է մինակ որ հարստութիւն կը դիզէ իր երկրին մէջ: Եթէ մէկ քանի փաշա միլիոններու հետ կը խաղան, ոսկեզօծ թըշուառութիւնն է ատիկա: Քաղքենի դասակարգը պետութեան պաշտօնեայ է, հետեւաբար կանոնաւոր ամսական չի ստանար. ցաւազին թշուառութիւնն է ատիկա: Գեղացին տուրքերու տակ կը հեծէ: Ոչ ոք կ'ուզէ ու կրնայ պայուսակի մը համար իր մեծ հօրը վճարած գինը տալ: Ճաշակը գրեթէ նոյն կը մնայ. նմանօրինակ ապրանք կ'ուզեն, բայց աւելի աժան: Տեղացի միջնորդն ալ ամէն բանէ առաջ վճարման գիւրութիւններու պէտք ունի, եւ Գերմանացին, որ իր մրցակիցներէն 40 0 0 աւելի աժան կուտայ, սիրայօժար կը շնորհէ նաեւ ինք ամսուան պայմանաժամ, մինչդեռ Ֆրանսացիին պայմանաժամը ան առաւելն 90 օրէն անգին չանցնիր:

Ալ ինչ փոյթ ապրանքին տեսակը: Յաճախորդ ծողովուրդներուն մէջ, Թիւրքը դիւրաւ կը խաբուի գեղեցիկ խօսքերէն. երբոր ապրանքը իրեն կը ներկայացուի, մտքէն իսկ չանցընէր թէ զինքը կը խաբեն: Հաւանօրէն կը մտածէ որ զինքը քսան տարիէ ի վեր ինկած են, որովհետեւ հօրմէն նուազ հարուստ է: Յոյնը եւ Հայը վարպետորդին են որոնք ապիկուած խաւաքարտը բուն կա-

չի տեղ չեն կլներ. բայց աժանութիւնը կը գնահատեն, եւ կը յուսան որ իրենց պայուսակը այնչափ պիտի տեւ որչափ իրենց հայրերունը: Մեծ քաղաքներու եւ նաւահանգիստներու եւրոպական պզտիկ գաղթականութեանց մէջ, զրամի պէտքը սոսկալի է. ամէն մարդ աւելի՛ երեւոյթով կ'ապրի քան իրականութեամբ. պէտքերը շատ են. շատ քիչ զրամ ունենալով մէկտեղ՝ շատ բան գնել կ'ուզեն, եւ փոյթ չէ թէ ապրանքը վարնոց ըլլայ, կ'օգտէ որ փայլուն ըլլայ: Աժանութեան օրէնքը ուրեմն ընդհանուր եղած է, եւ զերմանական ապրանքը կը տիրէ ամէն խանութներու մէջ. Կ. Պոլսոյ ֆրանսական վաճառատուններն իսկ Գերմանիայէն բերել կուտան իրենց պէտք եւ զածը:

Հաճոյ ըլլալու համար պահպանողական թիւրքիոյ որ իր վարժուած ձեւերը կը սիրէ, Գերմանիա իր օրինակները կ'անէ Ֆրանսայէն ու Անգլիայէն. բայց նմանութիւնը չի կրնար յաղթել անգլիական ու ֆրանսական ինչ ինչ վաճառանիշներու, ուստի զերման ճարտարագործութիւնը անոնց կեղծը կը շինէ: Շէֆֆիլտի գործարանները ստիպուեցան մեծ գատ մը բանալ զերման դանակագործութեան տուներուն գէմ: Եղիպտոսի մէջ շահեցան դատերնին. բայց, թիւրքիոյ մէջ, դատարանները այնչափ տրամալիք չեն երեւնար՝ անոնց իրաւունք տալու: Գերմանական կերպասի ծրարներ կը տեսնէք որոնց եզերքին վրայ գրուած է «Էյպէօֆի կերպաս» կամ «Մըամնի կերպաս», եւ Համպուրկէն՝ շամբանիայի ու քոնեսաքի հեղեղներ կ'երթան թիւրքիա: Գործառնութեանց մէջ պարկեշտութիւն մնացած չէ՝ Գերմանիոյ սկսած մրցումէն ի վեր: Էտիրնէի ֆրանսական Առեւտրական սենեակը կը գրէ. «Յորմէհետէ խարէութիւնը յաջորդած է առեւտրական պարկեշտութեան, կասկածոտութիւնը կը տիրէ գործառնութեանց մէջ եւ սակաւ անշուշտ կը դժուարացնէ գործերը: Անշուշտ գործի մէջ ուղիղ զերման տուններ ըլլալու են. բայց, այստեղ, մենք շատ չենք տեսներ ատոնցմէ:» Եւ սակայն ուղղամտութիւնը, եթէ հազուադէպ է Էտիրնէ, ընդհանրապէս ամէն տեղ ի գործ կը դրուի: Գերմանական ապրանքը որչափ ալ գէշ ըլլայ, արժէքէն աւելի սուղ գին մը չի պահանջեր: Գնողը գիտէ ապրանքին տեսակը, եւ Գերմանացիները չի մեղադրեր: Գերմանացին շատ պզտիկ շահով կը շատանայ, եւ տեղացին անոր շնորհակալ է այդ բանին համար: Անոնց յարաճուն ժողովրդականութեան առաջին գաղտնիքը սա է:

Երկրորդն է թերեւ՝ յարմարելու մասնաւոր ձիրք մը, իրենց յաճախորդին ճաշակին եւ նոյն իսկ զգացումներուն համար մասնաւոր յարգանք մը: Ուզուած տեսակը եւ ուզուած քանակը ճիշդ օրին կը յանձնեն: Սիրալիր, հաճոյակատար ու ճշգրտակալ են:

Ու յետոյ, Գերմանացին չի խրտչիք զոհողութենէ: «Առաջին ապսպրանքները սակաւաթիւ էին. զանոնք ձեռք բերելու համար, հարկ եղաւ երկար պայմանաժամներ տալ երկրորդ կարգի գնողներու եւ շատ ձախողութեաններու հանդուրժել: Եթէ Գերմանիա ճիշդ հաշիւը բռնելու ըլլար

սկիզբները թիւրքիոյ մէջ կ'սրսնցուցած գումարներուն, խոշոր համագումարի մը պիտի հասնէր ասիկա: Բայց զերման ճարտարագործութիւնը հաշուեց թէ այդ զոհողութիւնները հարկաւոր էին, չվհատեցաւ: Այսօր, իր ձեռնբեկութեան եւ յարատեւութեան արդիւնքը կը քալէ:»

Աւելցնենք ասոր վրայ զերման վաճառականութեան ընտրած գործելու նոր եղանակը: Մինչդեռ ֆրանսական վաճառականութիւնը Լատիններու վրայ հիմնուած է, անգլիական վաճառականութիւնը՝ Հայերուն վրայ, եւ, ընդհանրապէս, երկուքն ալ տեղացի միջնորդներու ձեռքով կը գործեն, զերման վաճառականութիւնը ուղեց իր գործը ինք իր ձեռքով տեսնել: Միջնորդները ջնջելով, ապրանքին վրայ զիրքերը կը պակսեցնէր եւ իր նուազագոյն շահի սկզբունքին հաւատարիմ կը մնար: Այնչէն առաջ, առջեւէն քեց աւստրիացի Հրեաները, որոնք իր ուղղակի ներկայացուցիչներն էին եւ որոնք ճամբան բացին մինչեւ ասիական թիւրքիոյ խորերը: Անոնց հետեւէն հասան բուն Գերմանացիները: Գործի տէրերը անձամբ հետազոտութեան ճամբորդութիւններ կատարեցին: Յետոյ իրենց մարդիկը տեղաւորեցին, ամենուրեք զերման ներկայացուցիչներ սնեցան, որոնք հիմա կը վիտան օտմանեան ծովեզերքին երկայնքը եւ դէպի երկրին ներսերը կ'երթան, մինչեւ խորերը:

1890 էն առաջ, զերմանական գրողակը գրեթէ չէր երեւնար օտմանեան ջրերուն մէջ: 1897ին 200ի մօտ զերման նաւ մտած է Կ. Պոլսոյ նաւահանգիստը: Ասիկա բան մը ըսել չէ 6,000 անգլիականներուն քով, բայց 260 ֆրանսականներուն քաղցատմամբ՝ շատ ուշադրու է:

Գերմանիա, իր աշխատութեամբք, մեծ տեղ մը բռնած է այսօր թիւրքիոյ մէջ: Կ. Պոլսոյ զերմանական վարժարանը շատ յոյն ու հայ աշակերտ վաստակած է որոնց ծնողները աղէկ զիտեն թէ հօլը ո'ւսկից պիտի փչէ:

ԺՈՐԺ ԿՈՒԽՍ

Վ Ե Ր Չ

Փ Ր Փ Ո Ի Ր

(Բարթողիմէոսի նահատակներուն յիշատակին)

Ծովի գոհար հեզ փրփուր,
 Լուսեղէն, մանր ու մաքուր,
 Ալեաց երկունք քեզ ծընան,
 Ալեաց կըռիւ քեզ օրբան:

Կապոյտ ծովին ծաւալած
 Ծովի ծաղիկ նորբաց,
 Ջրբի աստըղ, ջրի ժողիտ
 Ծիւ ծիւ ծըլած խիտ առ խիտ:

Ալեաց միջև տարուրեր
Ծովի փրփուր վազմեո,
Մօրըզ ծոցին մէջ արգէն՝
Կեանքն ու մահ բեզ կ'օրօրեն:



Ծովի փրփուր մըրըկալի,
Ուր Յոյն արգէն կը հալի,
Զուր կ'ոգորիս, կը հեւս
Օրհասիդ գեմ վերահաս:

Երբ սաւառնիս դէպի վեր
Եթերբին մէջ, մօրդ պատկեր,
Աւպերը թող բեզ չի տան
Երկայն հանդիստ մ'անվախճան:

Իջի՛ր, ցօղէ՛ մեզմօղին
Որպէս արցունքն երկընթին,
Լըւա՛, սըրբէ չոր արին
Անյայտ շիրմին քաջերուն:

Անոնք ինկան անխրոտ
Կեանքի ալեաց կուրծք տալով,
Անոնք, փրփուրն Հայութեան,
Ծընած, մեռած բն'դ նըման:

Սեւ ծով

Վ. ՇԱՀԷՆԻ

ԱՆԳՆԻՍՏԱՆ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ
Ի ՆՊԱՍՏ ՀԱՅԵՐՈՒՆ

Գարտիֆի մէջ զումարուած Ազգային Համաժողովին ատթիւ, որուն ներկայ գանուեցան հայ թշուառներուն նիւթապէս օգնող բոլոր անգլիական ընկերութիւնները, տեսարակ մը հրատարակուեցաւ որուն մէջ նշանակուած են այդ ընկերութեանց անունները, իրենց կատարած գործին մէկ համառօտ տեղեկագրութեամբը: «Նոր Կեանք» ընթերցողներուն կը ներկայացնենք այսօր այդ տեսարակին զլուսւոր մասերը:

Լոնտոնի մէջ կեդրոնացած մարմիններն են.

ՀԱՅԿԱԿԱՆ Նպաստամատոյց Յանձնաժողով, նախագահ՝ Արկայի գուբա, գործադիր ժողովին նախախագահ՝ Ուէսթմինսթրի գուբա: Այս կարեւոր յանձնաժողովը, թէպէտ լոկ անհաստական նախաձեռնութեան արգիւնք, ազգային հանգամանք մը առաւ: 1895ի գարնան, մէկ քանի Անգլիացիներ որոնք, վաղուց կը համակրէին

Հայկական դատին, հասկցան թէ մօտալուս ապագայի մը մէջ հալածանքը պիտի տարածուէր ամբողջ Հայաստան: Անգլիական կառավարութեան իմացուցին ասիկա, և վրդովուժով ու ցաւով հաստատեցին թէ կառավարութիւնը ինքզինքը անկարող կը զգար այդ պարագային, և թէ կարելիութիւն չի կար որ զաշնագիրներով խոստացուած պաշտպանութիւնը ընձեռուէր ազգեցիկ կերպով: Ասոր վրայ, նկատեցին թէ լաւագոյն բանը որ կրնային ընել՝ հայ ժողովրդին տառապանքը թեթեւցնելն էր, և, կլատրագոնի սրտեառնոյն աջակցութեամբ, որոշուեցաւ հանգանակութեան մը ձեռնարկել և հրաւիրել Ուէսթմինսթրի գուբաը որ գործին նախագահէ: Դուքսը սիրայօժար ընդունեց, և իր կրօնըրը Հաւուի բնակարանը յանձնաժողովին տրամադրութեան ներքեւ դրաւ: Յանձնաժողովին նախագահութիւնը ընդունեց Արկայի գուբաը, որ Արեւելքի քրիստոնեաներուն դատին վաղեմի ջատագովն է Անգլիոյ մէջ: 1895ի աշնան ջարդերը անգլիական հասարակութեան մեծ մասին մէջ համակրանք արթնցուցին տառապեալներուն համար, և Լոնտոնի լորտ-քաղաքապետը Լոնտոնցիներուն հրաւիր կարգաց մանակցիլ հանգանակութեան, ինչպէս նաեւ գաւառական լորտ-քաղաքապետներ ու քաղաքապետներ իրենք ալ հանգանակութիւն բացին, և անգլիական գաղութներէն շատեր ալ իրենց նըպաստը գրկեցին: Այսպէս 101,000 ոսկիէն աւելի գումար մը հանգանակուած է, որուն 12,000ը Պուլկարիոյ գաղթականներուն վրայ ծախսուած է և մնացեալը յանձնուած կ. Պոլսոյ կեդրոնական յանձնաժողովին, ուսից անգլիական հիւպատոսներու ու դեր-հիւպատոսներու և ամերիկացի միսիոնարներու միջոցաւ զրկուած է ֆոքըր-Ասիոյ մէջ 20 կեդրոն:

ԿԱՆԱՆՅ Հայկական Նպաստամատոյց Յանձնաժողով, գանձապետ՝ տիկին Մատլէն Գոլ, քարտուղար՝ տիկին Մէրի Հիքսըն: Ասիկա Անգլիոյ մէջ Հայերուն նպաստող ընկերութեանց անդրանիկը եղաւ: Տիկին Գոլ հիմնեց զայն 1895 մարտին, և ֆոքըր-Ասիոյ հալածեալ քրիստոնեաներուն ի նպաստ կոչ մը ուղղեց, զոր հազարաւոր կիներ ստորադրած էին: Ապրիլին զրկուեցաւ նպաստի առաջին գումարը, 25 ոսկի: Յունիսին, Վանէն Տը. Քիմսոլ արհեստանոցներու միջոցաւ նպաստ բաշխելու ծրագիր մը թելադրեց ընկերութեան: Նպաստին էր բուրդ ու բամբակ գնել և սովամահ ժողովրդին մանկ ու աղանկիքի վերածել տալ: Ընկերութիւնը այդ ծրագրին գործադրութեանը ձեռք զարկաւ 50 ոսկի զրկելով, և անկից ի վեր այդ կարգի աշխատանք-նպաստի գործերուն օրինակը հաստատեց: 1895 աշնան, Վանի նահանգէն, զոր Քիւրտերը աւերած էին, հազարաւոր փախստականներ վան խուժեցին: Հարկ եղաւ անոնց բաժնել արհեստանոցին մէջ շինուած կտաւը, նոյնպէս փուռեր և ճաշարաններ բանալ: Փախստականներուն թիւը ամէկ ամիս կ'աւելնար, և 96 ապրիլին՝ արհեստանոցին վարչութիւնը 22,000 հոգի կը հողար. բաւական ատեն, ընկերութիւնը Անգլիայէն ամէն շաբաթ 400 ոսկի կը զրկէր Վան: Գարնան, փախստականները ետ գարձուեցան իրենց գեղերը, սերմնցու ու գործիք բաշխուեցաւ իրենց, և եզ փսիս

արուեցաւ որչափ որ կարելի էր: 96 յունիսին, Վանի նահանգին կոտորածը տեղի ունեցաւ, որուն մէջ 10,000 Հայ կորուեցան, զխաւորապէս էրիկմարդիկ: Թշուառութիւնը նորէն սաստկացաւ, մինչդեռ միւս կողմէ հարկ դատուեցաւ կին միսիոնարները այդ կողմերէն ետ կանչել: Գործը շարունակեց ամերիկացի միսիոնար Տր. Բէյնոլտս, որ հիմակ արհեստանոցը վերակազմած է, պըզտիկցնելով զայն, զխաւորապէս որբեայրիներու միայն գործ տալով, եւ որբանոց մը բացած է (նախ եւ առաջ Ալգասէն զրկուած նպաստներով) ուր հիմա 350 որբ կը խնամուին: — Ընկերութիւնը նմանապէս նպաստ զրկած է Տիարպէքեր, Չէյթուն, Վաննա, Ուրմիա եւ ուրիշ տեղեր: Ընդամէնը հաւաքած է 16,000 ոսկի, եւ Անգլիոյ մէջ իր ամբողջ ծախքը եղած է 160 ոսկի:

ՏԵՂԵԿԱՏՈՒ (Հայաստան) զրասնեակ, քարտուզար՝ Պ. 2. Հէջ: Այս ընկերութիւնը կազմուեցաւ 1895 զեկտեմբերին նպատակ ունենալով Անգլիացիներուն համակրանքը շարժել ի նպաստ հայկական դատին՝ վաւերական տեղեկութիւններ հրատարակելով եւ տարածելով: Հրատարակեց կանոնիկոս Սքոթ-Հոլլէնտի «Աղօթքի կոչմը»-ն, զոր ստորագրած էին ծանօթ եպիսկոպոսներ ու հոգեւորականներ, ու 25,000 օրինակ տարածեց. տետրակը թարգմանուեցաւ նոյնպէս ֆրանսերէնի, գերմաներէնի, իտալերէնի, ռուսերէնի եւ արաբերէնի: Յետոյ, տետրակներու ամբողջ շարք մը հրատարակ հանուեցաւ: 1896 փետրուարին, Պ. Սթէտի հրատարակած «Հայաստան» տետրակը 50,000 օրինակ տարածուեցաւ: 1896 մարտ 29ին, Գրասնեակին աշակցութեամբ, Սինդ Ճէյմս՝ Հոլի մէջ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարուեցաւ հայ նահատակներուն համար, եւ նմանօրինակ հոգեհանգիստներ յետոյ տեղի ունեցան Անգլիոյ շատ կողմերը: Յետոյ, Գրասնեակը աշակցեցաւ Հէրէֆորտի եպիսկոպոսին ու Տր. Բէյլընի՝ մասնաւոր յիշատակապիւր մը ներկայացնելու Ռուսիոյ կայսեր՝ Անգլիոյ եւ Միացեալ-Նահանգներու կղերին կողմէ: Ուղչինկզնի եպիսկոպոսը օգոստոս 5 ին խնդրագիրը ներկայացուց ձարին ու ձարուհիին, եւ երկու օր յետոյ՝ մայր-Թագուհիէն ալ ունկնդրութիւն մը ունեցաւ: 1896ի Եկեղեցական Համաժողովին մէջ, սեզան մը զրուեցաւ՝ Հայոց մասին հրատարակուած գրութիւնները ծախելու համար. միեւնոյն ատեն ալ, միլիոն մը տեղի ունեցաւ, որուն մէջ խօսեցան Սաութհիլլի, Հէրէֆորտի եւ Բոչէսթըրի եպիսկոպոսները: Ասիկա նպատամատոյց ընկերութիւն մը չէ, բայց կը շարունակէ տետրակներ հրատարակել մերթ ընդ մերթ, եւ պատրաստ է նորէն գործի սկսելու երբ առիթը գայ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ Բարեկամներու Միջազգային ընկերակցութիւն, նախագահ՝ Բոչէսթըրի լորտ եպիսկոպոսը: Այս ընկերութիւնը 896 զեկտեմբերին հաստատուեցաւ եւ զրասնեակ մը բացաւ՝ Արեւելեան խնդրին մասին զըքեր ու քարակներ վաճառելու համար: Միտա «Պատահական

թերթեր»-ու շարք մը հրատարակել որոնք Ասիական Թիւրքիայէն միսիոնարներու եւ ուրիշներու տեղեկապիւրներ կը բովանդակէին. այդ գործը կը շարունակէ հիմա «Հայաստանի Բարեկամներ»-ու ընկերութիւնը: 1897 մայիս 19 ին միջազգային համաժողով մը գումարեց Լոնտոն, ուր ներկայ գտնուեցան Գերմանիայէն, Ֆրանսայէն, Չեխոսլոակիայէն եւ Անգլիոյ գանազան կողմերէն ներկայացուցիչներ:

ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒ Հայկական Նպատամատոյց Յանձնաժողով, քարտուզար եւ գանձապետ՝ Պ. Է. Բայդ Պրուքս: Այս ընկերութիւնը ապացոյց մըն է թէ բազմատարա սակաւութիւ խումբ մը, սրտանց աշխատելով, ինչե՛ր կրնայ ընել: Ընկերութիւնը կազմուեցաւ 1896 յունիսին յատուկ նպատակ ունենալով Պ. եւ տիկին Ճ. Բէյնտէլ Հարրիսը 96ի աշնան Հայաստան զրկելու: Ասոնք, իրենց դարձին, ամբողջ Անգլիոյ մէջ պարտեցան՝ իրենց վտանգաւոր ճամբորդութեան միջոցին քաղած տեղեկութիւններն տարածելով, եւ մասնաւոր հանգանակութիւն մը ըրին, որուն վրայ առանձին պիտի խօսինք: Բարեկամներու ընկերութիւնը 17,464 ոսկի հաւաքեց, եւ վարչական ծախք չի կայ: Դրամը բաշխուեցաւ 1) անձամբ Պ. եւ տիկին Հարրիսի ձեռքով, իրենց ճամբորդութեան միջոցին. 2) վերմակ ու ազանելիք զրկելով Պուլկարիա եւայն, Կ. Պոլսոյ ջարդէն ետքը. 3) արձառ ու երկրագործական պիտոյք գնելով՝ Վանի նահանգին մէջ երկրագործութիւնը վերահաստատելու համար, եւ ուրիշ շատ միջոցներով:

ԿԻՊՐՈՍԻ Հայ Գաղթականներու Յանձնաժողով, գանձապետ Պ. Բ. Պընդինի, քարտուզար՝ տիկին Շէլտըն Էմըս: Այս հանշահակութիւնը սկսաւ 1896ի ամրան, Կիպրոսի մէջ՝ իբր մերձաւորագոյն ապահով տեղը՝ ապաւէն ընծայելու համար սպաննուած Հայերու այրիներուն: Մէկ քանի հազար ոսկի հաւաքուեցաւ այսպէս, 96 սեպտեմբերին տիկին Շէլտըն Էմըս Կիպրոս գնաց եւ ապաստանարան մը բացաւ Լիմասոլ, որ յետոյ Լարնաքա փոխադրուեցաւ: Առաջին պատասպարեալները հասան Կ. Պոլսէն, եւ 1897ի գարնան, Այնթապէն ու Բաղէշէն 200 գաղթական, թոյլտուութիւնը վերջապէս ստացած ըլլալով, հոն ժամանեցին:

Այդ միջոցին տիկին Էմըս Անգլիա վարձած էր, եւ իր պաշտօնը առժամապէս կատարեցին տիկին Պոյաճեան եւ իր գուտորը, մինչեւ որ 1897 փետրուարին Ամերիկայէն հասաւ արդի մնայուն տեսչուհին, տիկին Ֆլուհարդ: Այս տիկինը, որ արդէն առաջ ալ Կիպրոս գտնուած էր, սկսաւ անմիջապէս գաղթականները աշխատութեան եւ ինքզինքնին ապրեցնելու սկզբունքին վարձեցնել: Մէկ քանի պարագայի մէջ, պատասպարեալները այդ կեանքին չյարմարեցան. ուրիշներ Ամերիկա կամ Եւրոպոս գործ գտնելով, ելան զացին. բայց մեծամասնութիւնը կը մնայ Կըրթարանին մէջ՝ մանկապարտէզ ալ կայ, եւ աշխատանքներն են ուստայնանկութիւնէ մինչեւ կօշկակարութիւն եւ

հարգաբերութիւն: Բայց ամէնէն կարեւոր գործն է մետաքսագործութիւնը: Մետաքսը կիպրոսի հին անուանի բերքերէն մին է, տեղական խողակը ամէն տեղէ աւելի խոշոր եւ թելը ամէն տեղէ աւելի ուժով ըլլալով: Բայց շերամարտութիւնը կործանած է հունտերուն հիւանդութեան պատճառաւ: Վերջերս միայն, եւ կերպով մը իբր հետեւանք այս ապաստանարանին հիմնարկութեան, լուրջ ջանքեր եղան այդ ճարտարագործութիւնը վերականգնելու կղզիին մէջ: Այս շարժման նախաձեռնարկ եղաւ Բրոֆ. Բալրիք Կէտէս որ կիպրոս գնաց, եւ, քիչ շատ աշակցութիւն գտնելով յիշեալ ընկերութիւնէն, ու Նիքոսա բնակող Պ. Վան Միլինձէի օժանդակութեամբ, շերամարտութեան վարժարան մը բացաւ՝ Մոնրէլիէն եկած հայ ուսուցիչներու տեսչութեան ներքեւ: Այս վարժարանը ըստ քանչելի գործ մը կատարելու վրայ է. աշակերտները վարժարանէն ելլելով պիտի կրնան զիւղացիներուն սորվեցնել թէ ի՞նչպէս հիւանդութիւնը ճանչնալու եւ առողջ հունտերը գտնելու են, եւ թէ ի՞նչ առողջապահական զրութեամբ մեծցնելու են որդերը: Գաղափար մը տալու համար թէ Տիկին Ֆլուհարդ այդ շերամարտութեան գործը ի՞նչքան ընդարձակ բռնած է, ըսենք թէ 25 անգլ. սակի խողակ գնած է եւ 80,000 առողջ հունտ հասցուցած ու ծախած է անցեալ տարի:

Այս ընկերութիւնը 6420 սակի հանգանակած է: Անգլիոյ մէջ ծախքը եղած է 26 սակի, եւ 4358 սակի պատրաստ կը մնայ:

Կիպրոսի Նպաստամատոյց Յանձնաժողով: Կիպրոսի մէջ կատարուած լաւագոյն գործերէն մին եղած է Ս. Մակարի Հայոց վանքէն 100 արտավար հող առնել ու վարուան համար առանց վարձքի, որմէ յետոյ հողին վրայ կատարուած բոլոր բարուրումները վանքին սեփականութիւնը պիտի դառնան: Այս գործին ձեռնարկուեցաւ 300 սակիով, զոր Քէզիք կազմուած յանձնախումբ մը տուաւ Կանոնիկոս Բուռնսլէի ձեռքով: Գիտարութիւնները առջի բերան շատ մեծ էին, գործիքներու եւ վարձ երկրագործներու պակասութեան պատճառաւ. բայց շատ շանցած երբեք չորս ընտանիք տեղաւորուեցան իբր ագարակասլան, եւ տեսնուեցաւ որ հողը շատ բեղմնաւոր եւ խոստմնալից է: Նոյն զրութիւնը զիւրաւ կրնայ գործադրուիլ նաեւ վանքին սեփական ամբողջ 3,000 արտավար հողին վրայ, եթէ պէտք եղածին շափ զրամազուիս հայթայթուի եւ կարող ու հայրենասէր հայ երիտասարդներ գտնուին որոնք ուզեն գործին անօրինութիւնը ստանձնել:

Շերամարտութեան վարժարան մը, Պ. Վան Միլինձէի վերին հսկողութեան տակ, երկու տարի է ահա կը գործէ, եւ 60-70 աշակերտ հասուցած է, մեծ մասը Հայ:

Աւելի լայն ձեռնարկ մը, — որուն համար երկու կըտոր հող գնուած է կղզիին արեւելեան կէսին մէջ, եւ հատ մը գնուած ու հատ մը վարձուած՝ արեւմտեան կէսին մէջ — այժմ կը գտնուի քիչ մը վարը յիշուած Ընկերակցութեան հսկողութեան տակ:

Տեղեկութիւններու համար զիմել առ Բրոֆ. Բալրիք Կէտէս, Էսթիմպուրիի համալսարանը:

ԱՐԵՎԵԼԵԱՆ եւ Գաղթային Ընկերակցութիւն: Այս ընկերակցութիւնը հիմնուեցաւ Բրոֆ. Բալրիք Կէտէսի նախաձեռնութեամբ, նպատակ ունենալով բարեփոխել կիպրոսի մշակութիւնը, եւ հետեւաբար կիպրոսցի ու գաղթական երկրագործներու վիճակը, ու այսպէս բնականաբար գործ գտնել կիպրոսի հայ գաղթականներէն անոնց որոնք երկրագործական վարժութիւն ունին: Այդ կղզին, որ առաջ այնքան բերրի էր, թիւրք վատթար վարչութեան տակ աւերակ մը դարձած է. բայց հիմա որ թիւրքը վտարուած է, ոչ միայն մարդասիրական հապանաւ շահաւոր գործ մըն է կղզիին դարձնել իր հին բարօրութիւնը: Անգլիական կառավարութիւնը բարեբաղդաբար այս տեսութիւնը ընդգրկած է, եւ հիմա մեծ գումարներ ծախսելու վրայ է սոսկման ջրանցքներու շինութեան, որուն մէջ շատ Հայեր կը գործածուին: Ընկերութեան զրամազընէն իբր 10000 սակի արգէն ստորադրուած է:

ՀԱՅԿԱՅԱՆ ապաստանարաններ, նախագահ՝ Պատ. Ֆ. Մէլեր: — Այս յանձնախումբը կազմուեցաւ 1896ի գարնան, Լոնտոն եկած անտուն Հայերուն օգնելու համար: Նոյն տարուան սեպտեմբերին տուն մը վարձուեցաւ Համսդէտ, եւ իբր 18 ամիս՝ ընկերութիւնը պարսպարեց 370 հողի՝ թիւրքիոյ 60 զանազան քաղաքներէ եւ զիւղերէ: Ասանցմէ 125ին գործ գտնուեցաւ, 70-80ին միջոց տրուեցաւ գաղթելու, եւ մնացեալներուն ալ իրենց բարեկալիքներուն քով երթալու: Ապաստանարանը գոցուեցաւ 1897 սեպտեմբերին, բայց յանձնախումբը դեռ կը մնայ: Մինչեւ 1897 զեկտեմբեր 6 հաւաքուած էր 1,496 սակի:

Գործի տէր մը, որ այդ պատասպարեալներէն մէկ քանին քովը առած էր, կը զրէ:

«Պ. Աւետիս Համսդէտի ապաստանարանէն եկաւ 1896 հոկտեմբերին. զժուարաւ կրնար ինքզինքը հասկցնել, բայց իր վայելուչ վարմունքով ընդհուպ յարգանք վայելեց հաշուակալութեան սենեկին մէջ, ուր հիմա կարեւոր պաշտօն մը ունի: 1896 նոյեմբերին ստիպողական նամակ մը ստացանք Համսդէտէն, որով կը հարցնէին թէ ուրիշ մէկն ալ չէ՞նք կրնար առնել: Պատասխանեցինք թէ խոհարարի մը համար տեղ ունենինք: Մէկը զբիւրեցաւ եւ սխաւ աշխատիլ խոհանոցը. ճորճ կոչեցինք զինքը: Կինս իմացուց ինձի թէ սորվելու մեծ փափաք ունէր, բայց տեսնուեցաւ որ շատ աւելի բարձր ընդունակութիւններ ունէր. անգլիերէն խօսիլ չէր զիտեր, բայց Պ. Աւետիսի միջոցաւ տեղեկացանք թէ ճարտարապետի զբրասնեկի մը մէջ աշխատած էր: Ասոր վրայ փոխադրուեցաւ կահ-կարասիի ճիւղը, ուր տեսանք որ շատ կարող անձ մըն էր զձայրելու եւ նորոգելու մէջ:

« Ուրիշ երկու հոգի, Յակոբ եւ Դաւիթ, որոնք շատ ժրաշան ատաղձագործներ էին, մեղի եկան 1897ին, ու յետոյ եկան պացին, մին Ամերիկա իր ազգականներուն մօտ, միւսը նորէն Հայաստան: Ետ ցաւեցանք իրենցմէ պատուելու, եւ երկուքն ալ ստիպեցինք որ եթէ չյաջողին՝ դառնան հոս գան եւ գործերնին վերսկսին: Ետ կը բաղձանք որ մեր հայրենակիցներն ալ անոնց անձնութեամբ եւ անկեղծութեամբ ոգին ունենան: »

(Մնացեալը յաջորդով)

Լ. Զ.

ԼՈՒՐԵՐ

« Ինչիւն օլ Ինչիւն » ի հանրածանօթ անօրէնք իր հոկտեմբերի ամսական տեսութեան մէջ Հայաստանի մասին խօսելով անցողակի, կ'ըսէ թէ Հայաստանը թիւրք հարստահարչներուն ձեռքէն ազատելու համար, բացի Ռուսիայէն, « ուրիշ յոյս մըն ալ կայ, ամերիկեան միջամտութեան մը յոյսը »: Բայց, ինչպէս կ'ըսէ Պ. Սթէւ, Ընքը Սամը շատ հեռու է:

— Ուսուցիչներու դուքսին մէկ հոյակապ նամակը կը դաննեք նորէն անպիտան թերթերուն մէջ: Ճիւղաւղարի եպիսկոպոսը Անգլիոյ Հայկական Նպաստամատոյց Յանձնաժողովին իմացուցած ըլլալով թէ իրենց ուշադրութիւնը պիտի հրաւիրէ Գերմանիոյ կայսեր թիւրքիա կատարած ուղեւորութեամբը մարդասիրութեան դէմ անիրաւելուն վրայ, եւ առաջարկի մը քուէարկութիւնը պիտի խնդրէ, Ուսուցիչներու դուքսը գաւառէն հետեւեալ նամակը ուղղած է Յանձնաժողովին քարտուղարին.

« Պարոն, զբաղդաբար չի պիտի կրնամ Լոնտոն ըլլալ ներկայ գտնուելու համար ժողովին որուն մէջ նկատուած պիտի անուրի եպիսկոպոսին նամակը: Սուլթանին շարագործութեանց եւ իր 100,000 Հայ հպատակներուն սպանութեանը մէջ իր մեղսակցութեան մասին այնչափ բան ըսուելէ, պրտելէ ու կապոյտ Գրքերով հաստատուելէ յետոյ, խորապէս ցաւալի ու աւաղելի է Գերմանիոյ կայսեր ընդունիլը հիւրընկալութիւնը վեհապետի մը, որ, պատմութեան մէջ նմանը չտեսնուած շարք մը սփերներով, ինքզինք քաղաքակրթութեան շրջանակէն դուրս դրած է: Անկեղծօրէն կը յուսամ թէ պետութիւնները ու եւ է պատրուակով թող պիտի չի տան որ թիւրք պահակազօրք մը, որչափ ալ սակաւաթիւ, կրետէ մնայ, կղզիին մէջ Սուլթանին գերիշխանութեան մէկ շօշափելի նշանը պահելը՝ աներկբայ կրետեցիներուն մտքին վրայ սա տպաւորութիւնը պիտի թողու թէ ամբողջովին ազատած չեն թիւրք վատթար վարչութեան արհաւիրքներէն: »

— Հոլանտական « Ամսօրտամէր » թերթին հոկտեմբերի 30ի թիւին մէջ պատկեր մը կայ որ ամբողջ զիրք մը կ'արժէ: Բարեւի կեցած թիւրք զինուորներու շարքի մը առջեւէն, կ'անցնին Վիլհելմ կայսրը եւ Սուլթանը որուն

թիւր մտած է կայսրուհին: Չինուորներուն ետին կը տարածուի մահուան ահաւոր դաշտ մը, կիներու, տղաքներու, ծերունիներու զիակներու խառնիխառն զէղերով, որոնց վերեւ ագռաւներ կը պտուտքին: Պատկերին տակ կը կարգանք.

Կայսրուհին՝ Սուլթանին. « Ինձի համար պատիւ մը ու հաճոյք մըն է՝ ձեր թեւին կրթնած՝ տեսնել ձեր արի զինուորները: Չէ՞ մի որ փոքր-Ասիա անոնց կը պարտի իր երջանկութիւնը եւ պաշտպանութիւնը: »

Սուլթանը. « Ինձի եւ անոնց, տիկին: »

— « Տէյլի Թէլէկրաֆ » էն. Հայաստանի մէջ, մասնաւորապէս Վան ու Բաղէշ, մեծ մտատանջութիւն կը տիրէ: Բաղէշի մէջ վերջերս խռովութիւն մը տեղի ունեցաւ որու միջոցին Քիւրտ մը եւ վեց Հայ սպանուեցան: Մէկ քանի քիւրտ պետերու տեղափոխութիւնը անհրաժեշտ է եթէ կ'ուզուի խաղաղութիւնը պահպանել:

— Ահաւասիկ « Անահիտ » ի առաջին թիւին բովանդակութիւնը.

Դարագլուխ (Արշակ Չօպանեան). — Մահուան արհաւիրքը (տիկին Մարի Սիւսեան). — Երգ, Դարաւերջի բարբերից, Պոյէտ (Ա. Մատուրեան). — Հայ գրականութիւն (Ա. Զ.) վարդ եւ Սոխակ (Խօսճէնց). — Հայուն շիւղերը (Տր. Պօղոս Քօլօյեան). — Հիւանդանոցի դիշեր (Մենիկ) — Ինչո՞ւն էր ոյժը (Վ. Փափաղեան). — Յաւին տունը (Արշակ Չօպանեան) — Գեղեցկին ընկերական դերը (Տիւրան Եսայեան). — Հայդերք (Չ.) — Պոռ թագաւորին սուրը, քերթուած (Վահրամ Սիւսեան). — Յեղին ձայնը (Լեւոն Բաշալեան). — Շէյխուրդին (Միր-Երօ). — Կարմիր Չաղացքը (Չապէլ Յովհաննէսեան). — Անապատէն ձայն (Երուանդ Օտեան). — « Ճոքոնտա » (Արշակ Չօպանեան). — Աղգային քրոնիկ. — Հայ գրականութիւնը Եւրոպայի մէջ:

Դիմել առ Արշակ Չօպանեան, 6, Բլաու տը լ'Օտլոն, Բարիկ:

ՀԱՍՑԷ ՈՒ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեկին զրկել առ

L. FRANK,
309, LADBROKE GROVE,
(ENGLAND). LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԷ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 15ին: Բաժնեկինն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոյար: